Ազգ
Azg
24-31 ՄԱՅԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 018(5800)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# Ալիեւի դիմանկարը, «Բաքվի նախաձեռնող խմբի» լոգոն՝ Նոր Կալեդոնիայի անկախության շարժիչ

Ի՞նչ նպատակ է հետապնդում Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը, երբ Խաղաղ օվկիանոսի հարավ արևմուտքում գտնվող Նոր Կալեդոնիայում խժդժություն է հրահրում: Նախորդ շաբաթ Ադրբեջանի դրոշն ու նույնիսկ Ալիեւի դիմանկարով պաստառը երեւացին Ֆրանսիային պատկանող Նոր Կալեդոնիայում, որ Բաքվի հրահանգով սկսել է վերագնահատել գաղութարարների քաղաքականությունը, դեմ է Փարիզի առաջարկած ընտրական օրենքի բարեփոխմանը եւ Ֆրանսիայից անկախանալու վճռականությամբ՝ պատրաստ է նույնիսկ բիրտ ուժ ցույց տալ: Նիկելի պաշարներով հարուստ կղզում 1988-ից ի վեր վիճակն այսքան չէր սրվել, 4 քաղաքացի, ֆրանսիացի երկու ժանդարմ արդեն զոհվել են, եւ երեքշաբթի օրը Ֆրանսիայի նախագահ **Էմանուել Մակրոնը** մեկնել է Նոր Կալեդոնիա՝ բանակցությունների միջոցով տեղաբնակներին հանդարտեցնելու: ⇨6

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Սթափ մտածողներ մնացե՞լ են վարչախմբում

Ազգային, քաղաքական, սոցիալական, նույնիսկ հոգեւոր ոլորտներում բազմաթիվ, բազմատեսակ ու բնական են հակասությունները, տարակարծությունները, կողմնորոշում պահանջող խնդիրները, որոնց նկատմամբ, հատկապես ներկա բարդ ժամանակներում, շատ բնական, հաճախ նույնիսկ անհրաժեշտ են անհատական, ընդհանուրից տարբերվող դիրքորոշումները, տեսակետների բախումը: Այս առումով զարմանալի միակարծություն, դոգմատիզմին մոտեցող համահարթեցված վիճակ է ներկայացնում «Քաղաքացիական պայմանագիր» կոչվող կուսակցությունը, որն արդեն հինգ տարուց ավել միահեծան իշխանություն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում, որդեգրել շատ ավելի այլամերժ՝ քան պառլամենտարիզմի տարատեսակների մեջ ամենահոռին համարվող «Խորհրդարանական բռնատիրությունը» (Parliametarian Dictatorship), օրենսդիր ու գործադիր իշխանությունների միաձուլմամբ նաեւ, որով, ի դեպ, ժամանակին գործել է Ֆաշիստական Գերմանիան:

Անցնող վեց տարիներին վերոհիշյալ կուսակցությունը, ճիշտ է, ունեցել է անհատական լքումներ, կուսակցական համակարգից,- օրենսդիր ու գործադիր,- հեռացողներ, նույնիսկ ընդդիմադիր ճամբար անցնողներ, որոնց թիվը սակայն եղել է շատ փոքր՝ համեմատած վերջին տարիներին մեր պետության ու ժողովրդի կրած կորուստների, արտաքին ու ներքին փորձությունների ու փորձանքների ահագնության հետ:

Ո՞րն է պատճառը «Քաղաքացիական պայմանագրի» այսպես եւ այսքան, սովետական խոսույթով ասած՝ շարքերի կուռ միասնության: Նույնիսկ ՀՅԴաշնակցությունը, որը մինչեւ անցյալ դարի 60-ականներ արտասահմանում ունեցել է ներքին ամենախիստ կարգապահությունը, ավելի շատ այլախոհներ, այլակարծիքներ է ունեցել, քան «ՔՊ»ն այսօր, որը, հետեւցնելով իր անունից՝ պայմանագրային համաձայնության վրա պետք էր հիմնված լիներ, ուր քաղաքացին որեւէ պահի կարող է եւ ազատ է կնքած պայմանագիրը խզելու:

Իսկապես, ո՞րն է պատճառը ներքին այդ անխզելիության: Բազմատեսակ ու բազմաչափ կաշառք-պարգեւավճարնե՞րը, պաշտոնազրկո՞ւմը, այսպես կոչված կոմպրոմատնե՞րը, քաղաքական ու տնտեսական հաշվեհարդարնե՞րը... Հավանաբար՝ այդ բոլորը, որոնց վրա պատմաբան ընկերս ավելացնում է արժանահավատ մի հանգամանք՝ իշխող կուսակցության մեծամասնությունը բաղկացած է իրենցից ոչինչ չներկայացնող մարդկանցից, որոնք առանց «ՔՊ»ի ոչինչ են: Ընկերս մատնանշում է այդպիսիներից մի քանիսին, որոնց անունները չեմ նշում այստեղ, չշոյելու համար նրանց փառասիրությունը:

Ծանոթ եմ ոմանց առարկությանը նաեւ, թե «ՔՊ»ականները զգայուն հարցերը քննարկում են իրենց փակ նիստերում ու հետո միայն բաց ներկայացնում հանրությանը: Կասկածում եմ՝ դատելով արդյունքից, որոշումների մակարդակից: Նաեւ՝ խորհրդարանի նախագահի մի քանի օր առաջ ասածից՝ հեռացողները «դասալիքներ» են:

Ու երեւակայել, որ մեր երկիրը, պետությունն եւ ժողովուրդը, ապրում է իր լինելիության ամենավտանգավոր ժամանակաշրջաններից մեկը ալեկոծ այս տարածաշրջանում, անվտանգային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական անստուգությունների հորձանուտում, որը կարծես չի հետաքրքրում իշխանավորների խմբին ու նրանց հետեւորդներին ու շահառուներին: Նրանք, ինքնավստահության եւ անհաղթելիության դիմակները դեմքերին, տգետներին հատուկ հոխորտ քայլվածքով անցնում են մարդկանց առջեւով՝ միշտ պաշտպանված ոստիկանապետական զրահով, այս մայրաքաղաքից այն մայրաքաղաք գնում, բանակցում վասն ոչնչի, խորհրդարանում կոռուպցիայի դիրքերից հակակոռուպցիոն դասեր են տալիս բոլորին, հրապարակային ելույթներ ունենում լրատվամիջոցներով ու բարբառում անվերջ՝ «մեր դեմ խաղ չկա»... Գոնե հիշեին, որ մոտիկ անցյալում այդպես հոխորտացող մի այլ կազմակերպություն կար Հայաստանում, դարձյալ իշխող, որի իզն ու թոզը չկա այսօր:

Սթափ մտածող որեւէ մարդ կա՞ վարչախմբում:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Բագրատ Սրբազան. «Շարժումն արդեն հաջողել է»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր **Խաչատուր Սուքիասյանի**՝ ընդդիմությանն ուղղված սպառնալիքները, թե՝ իշխանությունը կարող է նաեւ տասնամյակներ առաջ կառավարողների կերպով սպանել, բանտարկել, ունեզրկել, ավելի թունդ արձագանքի արժանացան խորհրդարանում եւ նրանից դուրս, քան սահմանազատման ներկա փուլը Տավուշում, Կիրանցի բնակիչների անհամաձայնությունը ներկայումս ընթացող սահմանազատմանը: Չնայած ՔՊ խմբակցության քարտուղար **Արթուր Հովհաննիսյանի** շուրթերով իշխանությունն առերես իրեն սահմանազատեց Խ. Սուքիասյանի հնչեցրած սպառնալիքներից, բայց նստվածքը մնաց:

Բագրատ Սրբազանի՝ Տավուշից սկսված շարժումը մեկ շաբաթում հասցրեց վերածվել ամենաքաղաքական շարժման՝ իշխանությանը հեռացնելու գլխավոր պահանջով, չնայած Սրբազանն ինքը շարժման բուն քայլերի մասին չի շտապում բացահայտումներ անել, ամեն ինչ հասցեագրելով կիրակի օրը՝ մայիսի 26-ին տեղի ունենալիք գլխավոր հանրահավաքին: Կիրակի օրն, ըստ Սրբազանի, մարդիկ կիմանան, թե ո՞վ է շարժման վարչապետի թեկնածուն, խորհրդարանում վարչապետին անվստահություն հայտնելո՞ւ, թե՞ սոսկ փողոցային շարժման ճնշմամբ են իշխանափոխություն իրականացնելու: Այդ հանրահավաքին կտրվեն անուններ՝ վարչապետի թեկնածուի, միգուցե՝ խորհրդարանում անվստահության գործընթաց սկսելու համար ստորագրահավաքին անհրաժեշտ թիվ ապահովողների: Կբարձրաձայնվի քայլերի հերթականություն, հետագա ռազմավարություն, մի խոսքով՝ ճանապարհային քարտեզ: Բայց այդ բոլորը նախ կախված է հանրահավաքի մասնակիցների թվից, որի մեծ լինելուն Սրբազանը չի կասկածում:

Սովորաբար հանրահավաքների հայկական փորձը վկայում է, որ հանրահավաքի եկողների վրա գլխավոր քայլերն ուշացնելու պարագան բացասաբար է ներգործում, իշխանությունն էլ ձեռքերը ծալած չի նստում, եւ մարդկանց վրա առաջին հերթին ազդում է այն հակաքարոզչությունը, որը իշխանությունն է անում՝ շարժումը որակելով ռուսական ազդեցության: Դատելով իշխանության՝ ԱԺ-կառավարություն վերջին հարցուպատասխանի համարյա ողջ բովանդակությունը շարժման ղեկավարին, նրա մասնակիցներին, արվող գործողություններին ողջ կոշտությամբ ուղղելուն, շարժումն անթաքույց այլ պետության գործակալական միջամտություն, իսկ Ռոբերտ Քոչարյանին անվանելով, ակնհայտ է դառնում, որ իշխանությունը լրջորեն անհանգստացել է շարժման ծավալներից եւ լրջորեն տեսանելի եւ անտեսանելի քայլեր է իրականացնում՝ այն խափանելու: ⇨3

## Aznovoice. Ապրելու, վերապրելու ձայնը

*Մայիսի 22-ին գերմանալեզու մեդիան արժեւորեց 100-ամյա Շառլ Ազնավուրին*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Շանսոնն անշուշտ Ֆրանսիայինն ու Բելգիայինն է, սակայն մեծ Արտիստի՝ Ազնավուրի 100-ամյակի օրը՝ մայիսի 22-ին, գերմանալեզու լրատվամիջոցների անդրադարձն այնքան ճշգրիտ բնութագրեց 161 սմ հասակով բեմի եւ էկրանի հսկային, որ թվաց, թե գերմանացիները որսացել են նրա՝ ֆրանսերեն օտար բառերի մակերեսի, մաշկի տակ անշփոթելի մի շերտ, որ քնքուշ լեզվի սահմաններից անդին է, բոլոր զգայարաններին «դիպչում է»՝ սրտից ուղեղին է հասնում, կարեւորն՝ այնտեղ մնում է. Նրա տեքստը միտք է նորոգում:

Մյուս կարեւոր հանգամանքը, որ գերմանացիների ուշադրությունն է բեւեռել՝ Ազնավուրի՝ ինքնիրեն ստեղծելու ուժն է. Բոլոր հոդվածներում, հրապարակումներում, ռադիոհաղորդումներում շեշտվում է Շահնուր- Շառլի առաջին բեմելը՝ հազիվ 30 քմ սենյակում հայ գաղթականների Ազնավուրյան ընտանիքն ապրում էր սերն ավելացնելով, մշակույթին կառչած, վտարանդի այլ հայերի հետ արարման անմեկնելի ուժն էր, որ անսպառ կենսականություն հաղորդելով հաղթահարելի էր դարձնում կենցաղային դժվարությունները: Երկլեզու ստեղծագործական միջավայր՝ հայերեն, ռուսերեն երգ, բաց ունկն, որ որսում է ազգային, ժողովրդական երգի հարուստ գանձերը, յուրացնում դրանք, խաղում ելեւէջների հետ...Հետո մեծ բեմ՝ անհաղթահարելին հաղթահարելու հանձնառություն: Վերապրողի կամքն է այն շարժիչը, որ Ազնավուրի բնատուր տաղանդը բարձրացրել է այնպիսի աստիճանի, որ մրցակցությունից դուրս է դրել նրան Ֆրանսիայում եւ այլուր՝ դարձնելով բոլոր ժամանակների մեծ Արտիստ՝ Պառնասի բնակիչ: Նա գիտեր հանդիսատեսին սիրելու, գերելու գաղտնիքը:

Ձայնը, արտիստիզմը, իմաստուն միտքը, անկեղծությունը, ճաշակը, անսահման աշխատասիրությունը՝ բազմալեզու երգիչ, 60-ից ավելի ֆիլմերում դերակատարում, 100 միլիոն վաճառված ալբոմ, անհաշվելի համերգներ, անհավատալի մահվան բոթից մի քանի օր առաջ 94-ամյա Ազնավուրը Ճապոնիայում դեռ բեմի վրա էր...ամեն բան Ազնավուրի մասին արտահայտվելիս կարեւորել է գերմանագիր լրագրությունը, նաեւ՝ երաժշտագիտական կարծիքը, որ շեշտադրում է Ազնավուրի 1000-ի սահմանին հասնող երգերի տեքստերի ամուր հենքը, որ անխաթար պինդ է մնում նաեւ գերմաներեն թարգմանված տարբերակներում: ⇨2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Որոշում՝ արդա՞ր, թէ՞ անարդար

Վերջերս Միջազգային Ոճրադատ Ատեանը (այսուհետեւ ՄՈԱ) իր վճիռը արձակեց՝ ձերբակալելու Իսրայէլի վարչապետ **Նեթանիահուն** եւ պաշտպանութեան նախարար **Կալանթը**, միւս կողմէ ալ՝ Համասի երեք ղեկավարներ՝ **Հանիյյան, Սինուարը** եւ **Տայֆը**, հինգն ալ որպէս պատերազմի յանցագործներ:

ՄՈԱ-ն դատապարտումի իր որոշումը կը պատճառաբանէ ըսելով, թէ Իսրայէլը սովի մատնելով պաղեստինցի ժողովուրդը ցեղասպանութիւն կը գործէ, միւս կողմէ ալ կը դատապարտէ Համասը, որ իսրայէլացի պատանդները վատ պայմաններու մէջ կը պահէ:

Ոչ ոք կ՚ակնկալէր, որ ցեղասպանութիւն գործողին կողքին յանցաւոր նկատուի նաեւ զոհ պաղեստինցին: Համասը զարմանք կը յայտնէ, թէ՝ ինչպէ՞ս կարելի է դահիճն ու զոհը հաւասարեցնել: Դատարանը երեւի յանուն արդարութեան երկու կողմերն ալ յանցաւոր նկատեց: Երկուքն ալ մերժեցին իրենց հասցէին առնուած որոշումը՝ զայն նկատելով անարդար: Իսրայէլը նոյնիսկ յայտարարեց, թէ Միջազգային Ոճրադատ Ատեանը բարոյականութենէ զուրկ է եւ խեղաթիւրած է արդարութիւնը: ԱՄՆ անմիջապէս հակադարձեց՝ ՄՈԱ-ի որոշումը անարդար նկատելով եւ իր մշտական զօրակցութիւնը յայտնեց Իսրայէլին:

Հարաւային Ափրիկէի Հանրապետութեան կողմէ ՄՈԱ-ին յղուած այս դատը թէեւ արդիւնաւորուեցաւ վճիռով մը, որ սակայն շատ հարցականներու դուռ կը բանայ: Նախ՝ ինչո՞ւ Հարաւային Ափրիկէի պետութիւնը պիտի ըլլար դատը ներկայացնողը եւ ո՛չ արաբական երկիր մը... Երկրորդ՝ որեւէ կողմի համոզելու կարիք չկայ հարցին էութիւնը պարզելու, քանի որ ամէն մարդու աչքին առջեւ են տեղի ունեցածները, հեռատեսիլով սփռուող, կամ համացանցի միջոցով: Ամբողջ եօթ ու կէս ամիս եւ տակաւին շարունակելի, աւելի քան 35.000 սպանեալ Ցահալի՝ իսրայէլեան բանակին կողմէ, աւելի քան 75.000 վիրաւոր, որոնց դարմանումն ու վերականգնումը կասկածելի է, քանի որ Կազայի բոլոր հիւանդանոցները թիրախաւորուած էին ու մեծամասնութիւնը անգործածելի դարձած, 400.000 բնակելի շինութիւն, քարուքանդ դարձած քաղաքներ, որոնց փլատակներուն տակ ուրուական դարձած անօթի, ծարաւ ժողովուրդի մը մնացորդացը կ՚ապրի, եթէ կարելի է «ապրիլ» որակել անոնց դժոխային կեանքը:

Իսրայէլացիները կը հակաճառեն, կ՚ըսեն՝ ինչո՞ւ անօթի, երբ անդադար օգնութիւն կը հասնի անոնց հսկայ բեռնատար մեքենաներով, օդանաւերը անկարգելաւոր հակեր կը տեղացնեն, նոյնիսկ Ամերիկան ծփացող «նաւահանգիստ» մը կառուցեց օգնութիւնները տեղ հասցնելու համար: Մարդ կը դիտէ հարիւրաւոր երախաներ, ձեռքերնին ամաններ, կաթսաներ, տաշտեր, եփուող ապուրի մը հսկայ կաթսային շուրջ աղաչական դէմքերով քանի մը շերեփ եփ եկած հեղուկէն կը խնդրեն որպէսզի սնուին: Ալ ի՞նչ խօսք հասած օգնութիւններուն մասին, երբ անոնց մեծամասնութիւնը տեղ չի հասնիր, ճամբան իսրայէլացի բնակիչներու կողմէ յարձակումի ենթարկուելով:

21-րդ դարու ամենամեծ ողբերգութիւնն է Կազայի պատերազմը, ուր Նեթանիահուի հովանաւորած մահուան ջոկատները արիւն ու աւեր կը սփռեն եւ կանգ պիտի չառնեն, մինչեւ հիմնայատակ չքանդեն Համասի կառոյցը, որ տակաւին կը պայքարի անվհաս կերպով:

Երբ բարեկամներու շրջանակին մէջ խօսք կը բացուի այս հարցին մասին եւ ես կը քննադատեմ Իսրայէլի անմարդկային վերաբերմունքը պաղեստինցիներու նկատմամբ, քննադատելով նաեւ արաբական երկիրները, որոնք ոչինչով օգնեցին պատերազմը դադրեցնելու համար, բացի ժողովներէ ու յայտարարութիւններէ, ըսողներ կ՚ըլլան, թէ միւս արաբները պաղեստինցիները չեն սիրեր, յատկապէս Համասը, եւ բոլորն ալ կը զգուշանան որ անոնք գաղթեն եւ իրենց երկիրները լեցնեն ապաստանեալներու հոսանքներով, նաեւ պատրուակելով որ անոնք պէտք չէ լքեն իրենց պապենական հողերն ու մնան որպէս իրաւատէր: Իսրայէլ ամէն միջոցի կը դիմէ, որ պաղեստինցիները հեռանան իրենց հողերէն, որպէսզի հարցը ի նպաստ իրեն լուծուի, երբ երկու պետութիւններու գաղափարը՝ Իսրայէլեան եւ Պաղեստինեան, անդադար կը յիշուի միջազգային հարթակներու վրայ եւ կողմնակիցներ կը շահի, որպէս վերջնական եւ արդար լուծում այս թնճուկին:

Երկու կարեւոր իրադարձութիւններ իրարու յաջորդեցին Մայիսի 20-ին. մէկը՝ Իրանի նախագահի եւ միւս պաշտօնեաներու ուղղաթիռի վթարին զոհ երթալն էր, միւսը՝ Միջազգային Ոճրադատ Ատեանին որոշումը: Տեսնենք, ՄՈԱ-ի վճիռը պիտի գործադրուի՞, թէ՞ ան ալ թուղթի վրայ պիտի մնայ, ինչպէս շատ որոշումներ:

# Իրանը կհաղթահարի բոլոր մարտահրավերները

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Իրանում ՀՀ նախկին դեսպան*



Կիրակի օրվա ողբերգական վթարը ցնցեց ու խորը ցավ պատճառեց նաեւ հայաստանցիներին: Հոգեցունց դեպքի առիթով Իրանի բարեկամ ժողովրդին ու ղեկավարությանը փոխանցվել են նաեւ մեր երկրի ղեկավարության կարեկցանքի խոսքերը: Բարձր մակարդակով տեղի է ունեցել արարողակարգային այցելություն: Ողբերգության նկատմամբ անտարբեր չի մնացել նաեւ Հայաստանի հասարակ ժողովուրդն ու ամենատարբեր միջոցներով արտահայտել իր կարեկցանքն ու ապրումակցումը:

Վերլուծությամբ զբաղվող մեր քաղաքագետներն իրենց վշտակցությունն արտահայտելու հետ մեկտեղ հնչեցրել են նաեւ ողբերգության հանգամանքների ու պատճառների, դրա միջազգային արձագանքների եւ հնարավոր հետեւանքների մասին տեսակետներ ու վերլուծություններ:

Իրանում խուճապը բացառելու եւ կառավարման համակարգում հնարավոր ճգնաժամի մասին խոսակցությունները կանխելու նպատակով, չսպասելով անգամ որոնողական ու փրկարարական աշխատանքների ավարտին, երկրի գերագույն հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեին** հանդես է եկել հայտարարությամբ եւ հավաստիացրել, որ երկրի ղեկավարման աշխատանքներում ոչ մի խափանում տեղի չի ունենալու:

Չի ուշացել նաեւ աղետի հետեւանքով զոհված պաշտոնատար անձանց փոխարինելու համար երկրի սահմանադրությամբ նախատեսված լուծումների մասին հայտարարությունը, համաձայն որի, մինչեւ նախագահական արտահերթ ընտրությունները, որը նախատեսվում է անցկացնել նախագահի մահվանից 50 օր անց, երկրի գործադիր իշխանության ղեկը, որպես նախագահի պաշտոնակատար, ստանձնելու է նախագահի առաջին տեղակալ **Մոհամմադ Մոխբերը**: Իսկ մինչեւ նոր կառավարության ձեւավորումը, արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար է նշանակվում աղետի զոհ դարձած ԱԳ նախարարի՝ քաղաքական հարցերով տեղակալ **Ալի Բաղերի Քանին**:

Նախագահի պաշտոնում **Էբրահիմ Ռայիսիին** փոխարինելու հարցի վերաբերյալ սահմանադրությունը լուծում առաջարկում է: Սակայն, երկրի գերագույն հոգեւոր առաջնորդ 85 ամյա Ալի Խամենեիին փոխարինելու հարցում սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները բավարար չեն եւ հստակեցված չեն Առաջնորդի նախընտրական անցուղարձերը: Պատճառը, հոգեւոր առաջնորդի ղեկավարման ժամկետի անորոշությունն ու փոխարինողի հարցը նրա ֆիզիկական բացակայությամբ պայմանավորելն է: Քանի որ Առաջնորդի կենդանության օրոք «նախընտրական պայքար» ծավալելն անպատշաճ է:

Խնդիրն այն է, որ ավիավթարից զոհված Էբրահիմ Ռայիսին երկրի գերագույն հոգեւոր առաջնորդի ամենահավանական թեկնածուներից էր: Իսկ այդ պաշտոնին հավակնող Ալի Խամենեիի որդու՝ **Մոջթաբա Խամենեիի** թեկնածության հարցը կարծես օրակարգից դուրս էր եկել այն բանից հետո, երբ գործող առաջնորդ Ալի Խամենեին կտրականապես դեմ էր արտահայտվել Առաջնորդի պաշտոնի ժառանգականության նկատմամբ, կրկնելով Իսլամական Հանրապետության հիմնադիր **Իմամ Խոմեյնիի** այն միտքը, որ այդ պաշտոնի ժառանգաբար փոխանցումը հակասում է կրոնապետական Իրանի կառավարման սկզբունքներին:

Առաջնորդին փոխարինող թեկնածուների հարցում առկա է նաեւ մեկ այլ առանձնահատկություն՝ դարձյալ Կրոնապետի կառավարման չհստակեցված ժամկետով պայմանավորված: Խնդիրն այն է, որ եթե, օրինակ, երկու տարի առաջ թեկնածուների շարքում կարող էր հանդես գալ Իսլամական համակարգին հավատարիմ եւ երկրին ծառայություններ մատուցած որոշակի անձ, նույն թեկնածուն չի կարող հավակնություններ ունենալ նաեւ այսօր: Իսկ երկու տարի անց հավանական թեկնածուն կարող է համարվել միանգամայն այլ հավակնորդ՝ նախորդի ֆիզիկական բացակայության կամ քաղաքական ասպարեզից դուրս մղվելու պատճառով:

Այսօր առաջնորդի հավանական թեկնածուների դաշտն ամայի է: Եթե իրավիճակը չփոխվի, չի բացառվում, որ ապագայում, գործող առաջնորդի բացակայության պայմաններում, ձեւավորվի «Առաջնորդական խորհուրդ», այսպես կոչված՝ «կոլեգիալ կառավարման խորհուրդ» որն իր մեջ կներառի երկրի տարբեր ուժային կենտրոններից ընտրված անձանց:

Մեզ համար հարեւան Իրանի կայունությունն ու անվտանգությունն ամենակարեւորն է: Կրոնապետական համակարգի սկզբունքներով կառավարվող Իրանն ունի 45-ամյա փորձ, ինչը հույս է ներշնչում, որ առկա դժվարությունների հաղթահարման համար երկրում գործի կդրվեն բոլոր միջոցներն ու հնարավորությունները:

# Aznovoice. Ապրելու, վերապրելու ձայնը

⇨1 Լրագրությունն ընդգծված հիշատակում է տաբու թեմաներն (70-ականներին նույնասեռականների մասին երգի մասին է խոսքը- Ա.Հ.) արծարծելու Ազնավուրի համարձակության, հանդուրժողականության, երիտասարդներին սատարելու մասին:

Տպագիր «Ազգ»ի սուղ տարածքի հրամայականն է ստիպում ամփոփ՝ վերնագրերով ներկայացնել Շառլ Ազնավուրի 100-ամյակի առիթով մայիսի 22-ի մեդիա արձագանքը:

«Ֆրանսիական մելամաղձի ձայնը» («Բայրիշե ռունդֆունկ»), «Շանսոնը շարունակում է ապրել», «Շառլ Ազնավուր. Նա մարմնավորեց շանսոնն այնպես, ինչպես որեւէ մեկը չհաջողեց» (NDR), «Խռպոտ ձայնով թզուկը» դարձավ հաջողության հսկան» (շվեյցարական SRF), «Ամենահանրածանոթ հայը» («Պրոյսիշե ալգեմայնե ցայթունգ»), «Շանսոնի Նապոլեոնը» («Դոյչլանդֆունկ»):

«Հսկան, լեգենդը, 20-րդ դարի մեծագույն արտիստներից մեկը, դասական վերջին շանսոնիեն»... երաժշտագետ Գերտ Հեգերը առանձնահատուկ սիրով է պատմում Ազնավուրի մասին: Նա, թվում է, ամեն բան գիտի թե՛ Շահնուր Ազնավուրյանի, թե՛ Շառլ Ազնավուրի մասին, եւ գերմանական «Դոյչլանդֆունկ- կուլտուր»-ի մայիսի 22-ի եթերից նրա խոսքը գերմաներեն սիրառատ պատմություն է Aznovoice-ի եւ Ազնավուրի մասին, որ չի մոռանում արժեւորել



նաեւ Ազնավուրի մարդկային բացառիկ որակը՝ «երբ հայտնի դարձավ, որ Լայզա Մինելին կաթված է ստացել, հաջորդ օրն Ազնավուրը ԱՄՆ-ում էր՝ իր հարազատ ընկերոջ հիվանդանոցի մահճի մոտ»:

Հեգերն իհարկե չմոռացավ, որ Ազնավուրը Շվեյցարիայում եւ ՄԱԿ-ում ՀՀ դեսպանն էր: Նա միջազգային ատյաններում իր նախնիների երկրի ամենակարեւոր ներկայացուցիչներից մեկն էր 1988-ի երկրաշարժից ի վեր: Նա արդարության ձայնն էր, երբ Թուրքիայից պահանջում էր ընդունել Հայոց ցեղասպանությունը:

Գերմանական ԶԼՄ-ներն իրազեկում են, որ 2024-ին տարբեր քաղաքներում զանազան միջոցառումներ են նախատեսված ի ոգեկոչումն Ազնավուրի 100-ամյակին:

⇨2

# Մեծ փորձության ժամին



Երբ քայլելով Երեւանի` այս տարի այնքան զարմանալի գեղեցիկ թվացող գարունի միջով, տեսնում էի ամենուր կարմիր բերետավորներին... ու մարդկանց` այնքան ներդաշնակ ու հաշտ դարձած այդ ամենի հետ... նորից զգում էի նույն շունչը` երբ ամեն ինչ շուրջդ դառնում է չափից ավելի պայծառ, ուրեմն հասել ես ողբերգության վերջին սահմանին:

Եվ ուրեմն` ամբողջ մի հասարակության հնարավոր եղավ համոզել, որ «ուղեղային մորմոք» էր ոչ միայն «Երկիր Նաիրին» (որն ինքնաթիռում կարդում-հայտնաբերում են միայն պատերազմից հետո), այլեւ Ղարաբաղը, ուղեղային մորմոք էր Հայաստանի Երրորդ Հանրապետությունն իր անկադաստր տարածքներով, մենք ինքներս` այսքան տարի ի հեճուկս ամենի այստեղի քաղաքացի մնացածներս, բայց «պետական մտածողություն չունեցողներս»: Մարդուն հնարավոր դարձավ համոզել, որ այն ամենը, ինչ գոյություն ունի իր մեջ, միայն մանկության, ազգայնական, կրոնական, պատմամիֆական ամենատարբեր զգայական կամ ինտելեկտուալ նեւրոզների դրսեւորումներ էին, «իրական» պետությունն այն է, ինչ ազատագրումն է այդ բնազդներից: Որ մեր բոլոր հիշողություններն ու ապրումները հայրենիքի մասին զառանցանքներ են, որոնցից ազատագրվում են համահավասարեցման ճանաչողության նոր հոգեբուժանոցներում, որ մենք մեզ մեր անասելի տառապանքի մեջ աշխարհի առաջ միջնաբերդ դարձած ու նրան անտեսանելի դարձած կորուսյալ մի տարածություն ու ժամանակ ենք...

Մի բան ապշեցրեց տարիներ առաջ` որ գուցե իսկապես մեր ճակատագրի պատմությունը բացառիկ է, կամ գոնե` մեր ազգի փորձիչը միայն մերն է: Նա ասես ամբողջ պատմության ընթացքում մի բան է արել` անընդհատ, ամեն քայլափոխի ջնջել մեր ոտնահետքերը, մեր կենդանության ու ներկայության ամեն մի վկայություն` ամեն տնից դուրս գալուց հետո մտել եւ հանգցրել-սրբել է ամեն ինչ: Համոզելու համար մեզ` մեր հոգուն, մտքին ու ճանաչողությանը, որ գոյություն չունենք... Ես չէի կարող պատկերացնել` որքան նյութական ձեւեր կարող է առնել այդ մոլուցքը եւ փորձությունը ընդամենը երկու տարվա ընթացքում:

Մենք սովորեցինք լսել կամ չլսել համատարփակ ուսուցիչների մի մոլուցքով տոգորված մարդկանց տեքստերը` ամեն օրհասական ժամի միայն հոգեբանական տարբեր դիագնոզների, բարոյափիլիսոփայական քարոզխոսության, սաղմոսասացության ու կրոնից բուժող աթեիզմի, առակախոսության ու բամբասանքների, գուրուականության, գնոստիցիզմի, պատմական առասպելաբանության կամ դրա պսակազերծման համախառնուրդով, որոնց այնքան անիմաստ է դարձել արձագանքել: Պետական պաշտոնյաներն իհարկե հոգու խորքում շատ բան կարող են լինել` խոստովանահայր, նոր մարգարե, անգամ ցնցուղագետ, բայց նրանք դրա համար չեն վարձատրվում:

Մենք սովորեցինք արթուն մնալ գիշերներն այն պատրանքով, որ դրա արդյունքում ինչ-որ բան չի լինի` կարմիր բերետավորները ոչինչ չեն անի Կիրանցում, մարդիկ «շանսատակ չեն արվի պատերի տակ», պայմանագրեր չեն կնքվի... ենթագիտակցորեն սովորեցինք անգամ ատամները սեղմած սպասել ամենավերջին գիշերվան, երբ կհանձնվի վերջին հանձնելիքը, եւ հանձնողները վերջապես կճողոպրեն այդ գիշեր ու կանհետանան ընդմիշտ` մեզ թողնելով մեր մեծ ողբը եւ մնացած ավերակները վերականգնելու համար կյանքերը:

Մեզ ցույց տվեցին` որքան մոգական, որքան անհաղթահարելի ուժ ունի միայն մի բան աշխարհում, որով անվերջորեն կարող ես իշխանություն պահել` պսակազերծումների ուժը: Քանի որ պսակազերծումը միակ բանն է, որ վերջ չի կարող ունենալ անսպառ նյութի պատճառով, եւ հասարակության բոլոր խավերն ունեն վերլուծական կարողություններ ու գիտելիքներ նույն այդ անիվի մեջ անվերջ պտտվելու համար` արագ ըմբռնելու ու համապսակազերծելու համար ամեն ինչ ու բոլորին, եւ վստահեցնելու համար իրենց ու բոլորին, որ ամեն ինչ նույնն է, ամեն ինչ հավասար ինքն իրեն ու ամեն ինչ անարժեք է, եւ որեւէ բան անելն անիմաստ է: Մեզ հիշեցրին` միշտ եղել է միայն մի բնազդ, որ առաջնորդում է հասարակությանը` նայել, ինչպես են ասպարեզի վրա գիշատիչ կենդանիները հոշոտում մարդուն, եւ քանի որ Հին Հռոմից շատ ժամանակ է անցել, սա այլեւս կարելի է անել միայն հոգեբանական դաշտում` ստեղծել հարթակներ ու ողջ հասարակության, կամ հատուկ արհեստավարժ պսակազերծողների, նոր կնքահայր-ոստիկանների հոշոտմանը հանձնել առանձին մարդկանց` սպառելու համար այդ հասարակության մաշված ուղեղի վերջին ռեսուրսները: Մեզ սովորեցրին, որ մեզ շրջապատող մարդիկ ընդամենը այն են, ինչ ենք` նրանք ունակ են միայն հայհոյել ամենուրեք ու ամեն ինչի մեջ, մեզ համոզեցին, որ մենք միայն ու ընդամենը դա ենք: Սրանից վեր պսակազերծումների դաշտում մենք կարողացանք ստեղծել նոր մի Չարից ու բարուց անդին, որտեղ սակայն չկա մշակութային տառապանք, վերապրում ու վերափոխում (որովհետեւ անգամ որեւէ մոլորություն կրելու համար պետք է ինչ-որ հոգեւոր ուժ, որ կպաշտպաներ իր մոլորությունը բոլոր ճշմարտությունների առաջ, որի պսակազերծումը տառապանք կպատճառեր, ու որի հաղթահարումը, ըստ այդմ, կդառնար ճանապարհ), միայն ծաղր ու լրագրողական սենսացիոն ձեւակերպումներ` հռոմեական հավաքի ու քարերի կույսի մասին: Դժվար է ասել` ինչն է ավելի ծանր, տգիտությունը սնող ազգային սնապարծությունը, թե՞ ամեն ինչից` որպես հին շորից ազատագրվելու ու նոր աշխարհ ցատկելու գավառական մոլուցքը, թե՞ այդ երկուսի տարբեր համադրությունների խառնուրդը:

... Բայց ինչո՞ւ այդ ասքն ի վերջո դարձավ միայն զոհի մասին, որ պետք է անցնի ցլերի առջեւով` առանց իր տատիկի հյուսած կարմիր հագուստի, եւ այնուամենայնիվ ամենայն հավանականությամբ պետք է հոշոտվի...

Եվ ինչպե՞ս միակ բանը, որ կարողացավ ծնել հպա՞րտ քաղաքացու այդ ուրվականը մղձավանջն է` ինչպես է «լեգիտիմ» վարչապետը դիպուկահարներ կանգնեցնում Օպերայի շենքի վրա կարմիր շորն այդպես էլ չհանած ու դրանով «լեգիտիմ թիրախ» մնացած մարդկանց համար:

Բայց խոսքի` նյութականացվող պատկերի հրեշավոր ուժից առավել հոգին հավատում է մարդկային (ժողովուրդ բառն այնքան է չարչրկվել) ինքնապաշտպանական մաքուր բնազդին, որ վերջապես կարող է արթնանալ: Հավատում է ուժին, որ ինչ-որ պահի վերջապես հառնում է ու ոռնում ցավից, եւ առանց «պղծելու իր շուրթերն անեծքով», առանց հեղափոխական հրեշավոր դագաղների, գլխի վրա կախված խաղալիքների, առանց վրիժառության մոլուցքի, ուղղակի վերջապես դուրս է ժայթքեցնում իր միջից մահվան մրուրը եւ կյանք է արտաբերում` իր անցյալի ողբերգության ու վերելքների, ու ապագայի մասին: Կա տրանսֆորմացիաներից տառապանքի մի սահման, որից հետո վերջապես, մի պահի այդ ձայնն արթնանում է եւ ասում Պեր Գյունտի պես` իմ աչքերը, իմ` մարդու աչքերը ես թույլ չեմ տա վերածել կենդանու աչքերի: Ես հավատում եմ, որ մենք վերջապես հասել ենք ցավի ու ողբերգության այդ սահմանին, այլապես մենք վաղուց արդեն գոյություն չունենք...

*Հ. Գ. (Ինչպես են ստեղծվում առասպելները): Միշտ զարմանքով մտածել եմ մի ժողովրդի առեղծվածի մասին, որի ամենախոր խորհրդանիշը` Արարատը, իր պետության սահմաններից դուրս է, միաժամանակ բնակիչները միշտ հայացքն ուղղում են նրան: Երբ շատ տարիներ առաջ եղա Թուրքիայի` Արեւմտյան Հայաստանի տարածքներում, զարմացա` որքան ոչ միֆական ու հասարակ է այդ սարն այն կողմից եւ որքան բարձր, հեռավոր ու ձյունապատ` մեր կողմից: Վերջերս լսեցի պրն Աշոտ Ոսկանյանի խոսքերը` գուցե Արարատն ինքնին իմաստ չունի, բայց այն իմաստ էր հաղորդում ամեն ինչին...*

**ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ**
**Մատենադարանի ավագ գիտաշխատող**

# Բագրատ Սրբազան. «Շարժումն արդեն հաջողել է»

⇨1 Վերջին խոսքն, իհարկե, հանրությանն է, կամ նրա այն մասինը, որ կհավատա Սրբազանին ու լուրջ, իշխանությանն անհանգստացնող թվով կլցնի հրապարակը, այդ ժամանակ ոչ ոք դա չի կարող անտեսել:

Անկախ ամեն ինչից` իշխանությունը, թեեւ ոչ առաջվա նման, բայց կողմնակիցներ ունի: Մեզ, որպես Հայաստանի քաղաքական շարժումների փորձառությունն իմացողների, առավել պետք է անհանգստացնի կողմերի` քաղաքական բախումների չգնալու հասունությունը: Այն էլ` տարածաշրջանային լարված իրավիճակների մեր ժամանակում, երբ Իրանը զբաղված է իր վշտով եւ առաջիկա ընտրություններով, մեր աջակիցներից սպասելիքների բացասական փորձ ունենք, մեր հարեւաններն էլ, ինչ խոստում էլ տան` գործնականում անվստահելի են, վկա Ադրբեջանի զավթողական խոսելաոճը:

Փորձեցինք **Բագրատ Սրբազան Գալստանյանից** ստանալ մեզ հուզող մեկ- երկու հարցի պատասխան: Այդ պահին Բագրատ Սրբազանը գնում էր հայրենադարձների հետ հանդիպման, հարցազրույց, որպես այդպիսին, չստացվեց, բայց փոքրիկ բլից- զրույցը եւս հետաքրքրական շեշտադրումներ ունի,այնպես որ ներկայացնում ենք` Շարժման վերաբերյալ լուրջ վերլուծությունը թողնելով մայիսի 26-ին կայանալիք Շարժման որոշիչ հանրահավաքից հետո, երբ շատ բան տեսանելի կլինի, այժմ չուզենալով մեր գնահատականներով ազդեցություն ունենալ շարժմանը հավատացող մարդկանց վրա:

Իսկ մեզ մտահոգում է հետեւյալը: Նախ` եթե իշխանության այս ու այն քայլերի, սահմանազատման խնդրում մոտեցումների հետ մեծ անհամաձայնություն կա հանրության ներսում, ապա Տավուշի անունով սկսված շարժումը, իրոք, պետք է որ կապեր իշխանության ձեռքերը, սկզբունքային սրբագրումներ մտցներ սահմանազատման գործընթացում: Բայց այդպիսի բան մենք չտեսանք: Սահմանազատումն ավարտվում է կարծես, վիճելի խնդիրները կամ անհամաձայնությունները լռեցվում են:

Երկրորդ` եթե Սրբազանի գլխավորած շարժումը, անկախ արդյունքից, ընդդիմադիր նոր բեւեռ ձեւավորի իրոք, դա շատ լավ կլինի, քանզի առանց հավասարակշռող ընդդիմադիր ուժեղ բեւեռի որեւէ իշխանություն բանի պետք չէ: Հայաստանում ընդդիմադիրների հանդեպ մարած վստահության պարագայում Սրբազանին գուցեեւ իրոք հաջողվի ուժեղ, նոր , երիտասարդ մարդկանց ներառած եւ իշխանության քայլերը զսպող ընդդիմություն ձեւավորել: Եթե այնքան համակիրներ ունենա այդ շարժումը, որ նաեւ իշխանությունը վերցնել կարողանա` լավ: Բայց քանի որ ներկա խորհրդարանական ընդդիմությունն իրեն նույնացնում է Սրբազանի գլխավորած շարժման հետ, բնականաբար Սրբազանը խնդիր ունի նոր դեմքերով իրեն շրջապատելու: Սակայն ոնց հասկանում ենք` նրան դա թույլ չեն տալիս նախկին երկու իշխանությունների պաշտոնյաները, իսկ նրանց ներկայությունը շատերին խրտնեցնում է:

Եւ ամենակարեւորը` եթե շարժումը ձախողվի, ապա ծանր հարվածը միաժամանակ կստանան ե՛ւ երկրի ընդդիմադիր շրջանակները` երկար ժամանակ ուշքի չգալով, ե՛ւ եկեղեցին: Այդ մտահոգությունների շուրջ էինք ուզում մեկ-երկու հարց ուղղել Սրբազանին, սակայն առանձնապես չհաջողեցինք բովանդակային խորքային պատասխաններ ստանալ` միգուցե հայրենադարձների հետ հանդիպմանը Սրբազանի շտապելու պատճառով: Ներկայացնենք բլից- զրույցը` մեր հարցերի գլխավոր պատասխանները այս կիրակի ստանալու նրա խոստմանը հղում անելով:

**-Քաղաքական հայտ եք ներկայացրել` ուրեմն եւ հաշվի եք առել երեւի վատագույն սցենարները: Ասենք` եթե շարժումը չհաջողի, ես չէ, որ պետք է Ձեզ ասեմ, թե որքան մեծ հարված է հասցվելու ե՛ւ ընդդիմությանը, ե՛ւ եկեղեցուն:**

-Վերլուծություն ե՞ք անում:

**-Ոչ , հարցնում եմ, թե արդյոք այդ` վատագույն սցենարը հաշվի առե՞ լ եք:**

-Բայց ինչո՞ւ պետք է չհաջողի:

**-Իսկ ինչի՞ հիման վրա եք համոզված հաջողության մեջ, արդյոք Ձեզ հանդիպողների թիվն ու որակն են Ձեր այդ համոզմունքի պատճառը:**

-Արդեն հաջողել է: Ես համոզված եմ, որ հաջողել է ` խորհրդարանի երեկ չէ առաջին օրվա ցնցումները տեսեք, կհամոզվեք:

**-Այսինքն` հաջողելու սցենարն եք միայն նախատեսում:**

-Վատագույն սցենարը մեր մեռնելն է, Հայաստանի կործանումն է, ուրիշ վատագույն սցենար չկա:

**-Ձեզ քննադատում են, որ Ձեր շուրջը շատ են նախկինները:**

-Դո՛ւք էլ եք նախկին:

# Բնության եւ մարդու ներդաշնությունը Լորիկ Մինասյանի արվեստում

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Գեղանկարիչ **Լորիկ Մինասյանի**` օրերս բացված անհատական ցուցահանդեսը խորագրված է «Մարդու եւ բնության ներդաշնակությունը»: Տեղեկացված լինելով Լորիկի արվեստից` այս խորագիրը կվերաձեւակերպեի` «Աստծո որոնումը մարդու եւ բնության ներդաշնությամբ»: Իհարկե, ցուցադրված շուրջ քառասունհինգ կտավները հայոց բնության հանդեպ սիրո արտահայտություն են` արվեստային բարձրորակ կատարումներով, գունային հանդարտ թախծությունից մինչեւ վառ երանգների խտությամբ, ընդգծուն նուրբ - քնարական տրամադրությամբ, Սյունյաց սոսիների դուրակի խորհրդավորությամբ, հայկական լեռնաշխարհի խստությունը մեղմող` խաղաղորեն տարածված բնակավայրերի վրձնումով, ժայռերից, ասես, խոյացող, բնությանը նույնքան ներդաշն մեր հինավուրց ձեռակերտ տաճարների դասկերներով:

Հայաստանի բնության թանգարանում ցուցադրված նրա կտավները նաեւ ճանաչողական նշանակություն ունեն այցելուների համար, քանի որ Լ. Մինասյանի արվեստը հնարավորություն է մտովի շրջելու Հայաստանի տարբեր վայրերում, ճանաչելու մեր երկիրը` իր հազարումի գույնով, հազարումի լեռ ու ծերպով, լեռների փեշերին, լեռների դաշտավանությանն ապավինած գյուղակներով, կենդանի աղոթքներ դարձած վանքերով...

Քառասունհինգ գործը բավարար չէ Լորիկի արվեստի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, բայց եւ ակնարկ է, թե ի՛նչ կերպ է ստեղծագործում, ի՛նչ ձեռագիր ունի, ինչի՛ց է խոսում եւ խորհում, ինչպիսին են նրա երազները, եւ ինչ նոր միտումներ են ուրվագծվում իր նկարչությունում: «Հաղպատ» եւ «Տաթեւ», «Հալիձոր» եւ «Վահանավանք», «Դադիվանք» եւ «Այրիվանք»,- այս եւ մնացյալ վանքանկարները մեր միջնադարյան ճարտարապետական կոթողների զուտ գեղանկարչական արձանագրումներ չեն, այլ բնապաշտության ու հայրենանվիրության արտահայտություններ, որոնց հիմքում նկարչի ներքին աղոթումն ու Աստծո որոնումն է:

Լորիկը նաեւ քանդակագործ է: Ենթադրում եմ` իր ձգտումը դեպի քանդակագործություն բխում է իր ծագումից: Ծագումով Սյունյաց աշխարհից է` Չիկահողեցի. նրա նախնիները բրուտագործներ են եղել, եւ հավանաբար ա-



րյան հիշողությունն է նաեւ մղել իրեն դեպի արվեստը: Լորիկի առաջին նշանակալից գործերից է 1990-ին իր ավագ եղբոր` գեղանկարիչ եւ քանդակագործ **Բորիկ Մինասյանի** համահեղինակությամբ ստեղծված «Մուսա» հարթաքանդակը, որ պահպանվում է Կապանի պատկերասրահում: Քաջարանում է կանգնեցված քաղաքի 50-ամյակի առթիվ Լորիկ Մինասյանի եւ **Գեւորգ Մշեցու** համահեղինակությամբ ստեղծված քանդակը: Քաջարանի «Կենաց ծառ»-ի հեղինակը դարձյալ Լորիկն է: Ցեղասպանության ճանաչման գործում ներդրում ունեցած հայորդիների հիշատակը հավերժացնող կոթողի մրցույթի հաղթողն է, Արցախյան առաջին պատերազմի զոհվածների հիշատակին ձոնված հուշակոթող - խաչքարի համահեղինակ եւ այլն: Բայց ամենից առավել կարեւորում է այն փաստը, որ հեղինակել է Կապան քաղաքի զինանշանը: Խորին հարգանքով եւ երախտագիտությամբ է տալիս իր ուսուցիչների` **Լեւոն Կոջոյանի** եւ **Ղուկաս Չուբարյանի** անունները, որոնց ուսանել եւ որոնցից արվեստային եւ մարդկայնության դասեր է քաղել:

Հայկական պետ. մանկավարժական համալսարանի կերպարվեստի ֆակուլտետում ուսանելու շրջանը Լորիկի համար ինքնահաստատման եւ ինքնադրսեւորման տարիներ էին: Հետագայում դասավանդեց Կապանի արվեստի դպրոցում, որպես մեթոդիստ` աշխատեց Կապանի Ժամանակակից արվեստի թանգարանում, որպես դիզայներ` ՀՀ Գիտությունների ակադեմիայի Կապանի մասնաճյուղի փորձարարական գործարանում: Միաժամանակ նկարում էր, մասնակցում ցուցահանդեսների, անհատական ցուցահանդեսներով հանդես գալիս Սիսիան, Գորիս եւ Կապան քաղաքներում (2014, 2015, 2019 թվականներին), Մոսկվայում (2017 թ.), 2012 թ. Գարեգին Նժդեհի 125-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսում լավագույնն է ճանաչվում նրա «Խուստուփի գարունը» կտավը:

Լ. Մինասյանի վրձնած լեռնագագաթների մեջ առանձնանում է «Խուստուփ»-ը: Նրանում հորիզոնին մերձ լեռն այնքա՜ն վեհություն ու հզորություն է իրենից արձակում, այնքա՜ն վստահ հանդարտությամբ է փռված նրա փեշերի տակ գյուղակը, եւ այնքա՜ն լայնակուրծ ես շնչում այն դիտելիս: Կողքին Դադիվանքը պատկերող կտավն է, «ծերը»` կանաչի մեջ խրված, մեր հավերժ անկոտրույսը, մե՛րը: Մի քանի շաբաթ առաջ էր, որ Գորիսում նկարչական սիմպոզիումի մասնակիցների հետ վրձնեց եւս մի ժայռանկար: Ո՞ւմ ծանոթ չէ Գորիսից դեպի Խնձորեսկ ճանապարհին դարերից հողմավար - ցցուն ժայռախումբը, եւ սիմպոզիումի մասնակից յուրաքանչյուր նկարիչ իր ձեռագրակերպով եւ գունաբաշխումներով է պատկերել այն: Բայց Լորիկը մի անսպասելի կերպար է ներմուծել իր բնանկարում: Վառ գունախաղով ժայռերի ֆոնին եւ ներքո` մարդկային բնակավայրից վեր` թեւող երկնավորն է` հրեշտակը:

Բնանկարներից բացի Լորիկը հոգեւոր թեմաներով շատ կտավներ ունի. դա ուղղակի սրբանկարչություն չէ, այլ հեղինակային գեղանկարչական մտածումներ են, խոկումներ: Որտեղի՞ց է բխում աստվածայինի որոնման իր ջանքը: Անկեղծանում է` իր կյանքի ծանր, ողբերգական մի պահի, ծնկի եկած իր արվեստանոցում, դիմել է Երկնքին, խնդրել արձագանքելու իր փնտրումին: Եվ այդ ժամանակ իր ճակատին լույս է բացվել, լույս, որ, իր զգացողությամբ, Սուրբ հոգին էր, որ սեր էր, կյանքի աղբյուր: «Այդ պահից էր, որ սկսեցի ճանաչել Աստծուն, ճանաչել մարդուն...»,- ասում է նկարիչը:

Հոգեւոր թեմաներով նկարչության շարքին եմ դասում Լորիկ Մինասյանի «Կուսանաց վանք»-ը. Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե վանքն է` թեթեւ մշուշոտ օրվա թախծության մեջ... Այդ կտավի տպավորությամբ եմ գրում բանաստեղծական տողս.



**_Լորիկ Մինասյան «Խուստուփ»_**



**_Լորիկ Մինասյան «Սուրբ Հռիփսիմե վանքը»_**



**_Լորիկ Մինասյան. բնանկար_**

*Մոխրակապտաթույր միգամածության թավիշ-դյութանքով*
*Ասես շուրջանակ ճառագայթում է վանքը Կուսանաց,*
*Մինչ մայրամուտի պայծառ - լուսառատ պատարագումով*
*Հաշտության խոսքով Անտեսն է ասես` իբրեւ հուշարար:*
*Միտքս մինչ այս պահ սերտած աղոթքի բառը մոռացած`*
*Նոր սաղմոսների կնդրուկաբուրվառ հունչն է որոնում`*
*Մերձավոր դաշտի գունափոխ խոտի ալեհերությամբ,*
*Չոր ավշե ճյուղով ծառի մերկացյալ անօգությունով...*

# Բարիտոն Նավասարդ Հակոբյանի Պրահայի մենահամերգը փառահեղ ճանապարհի նոր ուղի բացեց

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

**Պրահա**

Երբ մեկ տարի առաջ երիտասարդ հայ բարիտոն Նավասարդ Հակոբյանը արժանացավ միջազգային մի քանի մրցանակների, ակնհայտ էր, որ համաշխարհային օպերային արվեստում մուտք գործելու հույս է ներկայացնում եւս մեկ հայազգի տաղանդավոր երիտասարդ երգիչ:

Մայիսի 22-ի երեկոյան Պրահայի կենտրոնում գտնվող պատմական դահլիճներից մեկում նրա առաջին մենահամերգը եկավ հաստատելու մեր բոլոր կանխավարկածները: **Պլասիդո Դոմինգոյի** հիմնած «Օպերալիա» միջազգային հեղինակավոր մրցույթի «Զարզուելա» անվանակարգի հաղթող եւ 3-րդ տեղի մրցանակակիր բարիտոն Նավասարդ Հակոբյանը գերեց Պրահայի խստապահանջ հանդիսատեսին:

Դահլիճը սկզբում զգուշությամբ, ապա ամեն կատարումից հետո ավելի ջերմորեն ընդունեց հայ բարիտոնին, իսկ վերջում հետեւեցին բուռն ծափահարություններն ու «բրավոները»:

Իսկ Կոմիտասի «Ծիրանի ծառի» ու Ալեքսանդր Սպենդիարյանի «Ա՜յ վարդ» ռոմանսը Նավասարդի կատարումները, հնչեցին մի այլ նրբությամբ ու սիրով, իսկական անակնկալ էին դահլիճում ներկա չեխահայերի համար:

Ծրագրից դուրս Նավասարդը կատարեց նաեւ Ռախմանինովի երկու հրաշալի ռոմանսներ, իսկ իր ձայնի ողջ հզորությամբ դահլիճին գերեց իտալական հայտնի կոմպոզիտորների` Բելինիի, Դոնիցետիի, Տոստիի, Գաստալդոնի, Գուերերոյի եւ այլոց ստեղծագործությունների կատարմամբ: Իսկ նվագակցող դաշնակահար **Աիմադ Նեդարն** էլ առանձին կատարեց Շոպենի եւ Սմետանայի ստեղծագործություններից:

Նավասարդ Հակոբյանն ավարտելով Երեւանի կոնսերվատորիան, ինչպես նաեւ Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային թատրոնի ե-



րիտասարդական ծրագիրը, այժմ երկամյա երիտասարդական ուսումնական ծրագիր է անցնում ամերիկյան Հյուսթոնի հանրահայտ օպերայում, ուր նաեւ դերակատարումներով հանդես է գալիս թատրոնի խաղացանկային ներկայացումներում: Արդեն իսկ ելույթ է ունեցել Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայում, Վերդիի «Տրավիատայում», Պուչինիի «Մադամ Բատերֆլայում»: Այս տարվա մարտին նրա դեբյուտն էր Դալլասի օպերային թատրոնում Գրեգորիոյի դերում` «Ռոմեո եւ Ջուլիետ» օպերայում: Ներկա թատերաշրջանում նախատեսված են նաեւ նրա ելույթները Զալցբուրգում եւ Դրեզդենում:

Հիշեցնենք, որ Նավասարդը ծնվել է Հայաստանում` Գառնի գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ եւ երաժշտական դպրոցներում, ապա Երգի պետական թատրոնում` մինչեւ կբացահայտեր օպերային աշխարհը: Պլասիդո Դոմինգոն այն մարդն էր, ում լսելու միջոցով 15 տարեկանում բացահայտել է դասական երաժշտության ժանրը: Կյանքում ոչինչ հենց այնպես չի լինում: Տարիներ անց, իր համառ աշխատասիրության ու բնատուր տաղանդի շնորհիվ հասավ Դոմինգոյի սահմանած մրցանակին:

Մաղթում ենք, որ Նավասարդը գրավի այն բոլոր բարձունքները, որոնց ժամանակին հասել է իր ներշնչանքի երգիչը:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Լարա Արաբյան.
## սեփական ձայնով՝ կանադական մշակութային խճանկարում

*ԵՐԵՎԱՆ-ԹՈՐՈՆԹՈ - Լարա Արաբյանը (Արաթեան) երկլեզու դերասանուհի, բեմադրիչ եւ գրող է, որը մինչ Կանադայում հաստատվելն աշխատել է Նյու Յորքում եւ Փարիզում։ Ծնվել է Բեյրութում, նախնիները Կիլիկիայից են (Սիս) եւ Տիգրանակերտից։ Դերասանական ուսումը ստացել է Բանֆ-Սիթադել արհեստավարժ թատերական ծրագրում։ Աշխատել է Կանադայի տարբեր թատերախմբերում, հանդես եկել «Փլատակներ», «Բեռնարդա Ալբայի տունը», «Մենություններ», «Արծաթե նետ», «Արյունոտ հարսանիք», «Փխրուն ափին», «Բեռնարկղը» եւ այլ բեմադրություններում։ Մասնակցել է 18 կինո եւ հեռուստատեսային նախագծերի։ Որպես գրող՝ եղել է Բանֆի թատերագիրների միավորման եւ «Նայթվուդ» թատրոնի «Write from the Hip» ծրագրի անդամ։ Նրա վերջին՝ «Համոզմունքներ» պիեսի համաշխարհային առաջնախաղը կայացել է անցյալ աշնանը Ֆրանսիայի «Les Zébrures» փառատոնում։ Երկու անգամ առաջադրվել է «Դորա» գրական մրցանակին։ Դասախոսում է Ջորջ Բրաուն եւ Շերիդան քոլեջներում։*

**-Սիրելի՛ Լարա, ի՞նչ դժվարություններ է հաղթահարել լիբանանահայ աղջիկը Կանադայի մշակութային խճանկարում իր տեղը գտնելու համար։**

-Անշուշտ, այստեղ հասնելու ճանապարհը հեշտ չէր։ Երբ ես նոր էի սկսում (ու դեռ իմ մանուկ ժամանակ), կինոյում չկային հայ կանանց օրինակներ, որոնց կարող էի նմանակել, բացառությամբ, իհարկե, Շերի, բայց նա բոլորովին այլ աշխարհից էր թվում։ Այն հայ համայնքներում, որտեղ մեծացել եմ, հիմնականում՝ Թորոնթոյում եւ Օթթավայում, դերասան լինելու գաղափարը բոլորովին օտար էր։ Հայ արվեստը, որին առնչվում էինք, միշտ անցյալինն էր՝ ավանդական պարեր կամ համերգներ։ Բացի այդ, թվում էր նաեւ, որ դերասան լինելու վրա խարան կար, հատկապես իգական սեռի համար դա կարծես անպատվաբեր, անվայել ապրելակերպ էր։ Ես շատ ուրախ եմ, որ ամեն ինչ իսկապես փոխվել է։ Թորոնթոյի համայնքում այժմ կա ակտիվ ներգրավվածություն եւ նույնիսկ խրախուսանք՝ խորամուխ լինելու արվեստների մեջ եւ դարձնելու դրանք գործիք՝ մեր ինքնության բացահայտման եւ հաստատման համար։ Հուզիչ է դա տեսնել, եւ ես այնքա՜ն հպարտ ու խոնարհ եմ՝ լինելով դրա մի մասնիկը։ Ես սկսում եմ դառնալ հայ սկսնակ երիտասարդ արվեստագետների շփման կետը, եւ դա ինձ դուր է գալիս։ Եվ ուրախությամբ ասում եմ, որ այժմ




մեծ սեր եւ աջակցություն եմ զգում համայնքի կողմից։

**-Քո ֆիլմագրությունից պարզ է դառնում, որ հիմնականում կերպավորել ես արաբ եւ հայ հերոսուհիների։ Ինչպե՞ս ես վերաբերվում այդ իրողությանը։**

-Կանադական մշակույթի մեծ խճանկարում իմ տեղը գտնելու համար՝ դա նույնպես էվոլյուցիա էր։ Շատ երկար ժամանակ ինձ համարում էին սոսկ «էկզոտիկ», «էթնիկ» (բառացիորեն ինձ այս խոսքերն են ասել ոլորտի մարդիկ), հետեւաբար, ինձ առաջարկում էին նեղ շրջանակի դերեր, հատկապես կինոյի եւ հեռուստատեսության աշխարհում։ Տարիների ընթացքում ինքս ինձ ստիպեցի լինել շատ համառ դերասան՝ ստեղծելու համար մի տարածություն, որտեղ իմ ձայնը կարող էին լսել եւ հաշվի առնել։ Եվ, իհարկե, իմ փորձառությունը որպես BIPOC («սեւ, բնիկ, գունավոր») դերասանուհի ամենեւին էլ եզակի չէր։ Հանգամանքները բարելավվել են, փոխվել են վերջին տարիներին, բայց դեռ ճանապարհ ունենք անցնելու։

Ես միշտ ուրախ եմ եղել «ներկայացնել» իմ ժողովրդին եւ իմ ավելի լայն համայնքն ու մշակույթը, բայց երկար ժամանակ դա միակ բանն էր, որն ինձ «թույլատրում» էին անել, իսկ Կանադայի նման երկրում դա ոչ մի իմաստ չուներ։ Շատ հիասթափեցնող էր, որ աշխատանք ունենալու համար միշտ պետք է կերպարը խաղալ որոշ առոգանությամբ կամ գլխաշոր կապած։ Այս մասին ես խոսում եմ իմ«Սիրանույշ» մենաներկայացման մեջ, որը 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի առաջին քառորդի հայ բեմի ականավոր դերասանուհու մասին է։ Մեր տանը կատակում էին հաճախ՝ «Այս դերդ գլխաշորո՞վ է լինելու, թե՞ առանց»։ Ես հպարտ եմ, որ ներկայացնում եմ իմ արմատները, բայց հիասթափեցնող է, երբ սահմանափակվում ես՝ ցույց տալով քո միայն մեկ մասը։ Էլ չենք խոսում այն մասին, որ այդ կարգի կերպարները հաճախ լինում էին «ահաբեկիչներ» կամ տրավմատիկ փախստականներ կամ գաղթականներ։ Իհարկե, այդ մարդիկ գոյություն ունեն իրական կյանքում, բայց եթե դա միակ պատկերացումն է, որը տեսնում ենք, մինչդեռ մենք բաց ենք թողնում նրանցից շատերի մարդկայնությունը։ Դա այնքան նվաստացնող է։ Եվ դա հաճախ է լինում BIPOC դերերի հետ։



Ես բախտ եմ ունեցել արաբուհիների իմ վերջին մի քանի դերերով մարմնավորել զվարճալի, բարդ, սիրող մարդկանց, որոնք նման են բոլորին։ Նկատի ունեմ, որ նրանք չեն որոշարկվում սոսկ «ուրիշ մեկը» լինելով։ Դա իսկապես ուրախություն է եւ արտոնություն։



Ուրախ եմ նաեւ հայտնել, որ ավելի ու ավելի շատ եմ կերտում առանց հատուկ առոգանության խոսող կամ որոշակի հայ կամ արաբ կերպարներ։ Վերջապե՛ս։ Ուզում եմ նաեւ ասել, թե որքա՜ն կարեւոր է, որ մարդիկ իրենց տեսնեն «եռաչափ» ձեւով։ Մեր համայնքի մարդիկ, հատկապես կանայք, «Սիրանույշը» դիտելուց հետո գալիս էին ինձ մոտ եւ պատմում իրենց զգացողությունները։ Անծանոթ մարդիկ արտասվում էին, խնդրում գրկել ինձ կամ խոսել իրենց պայքարի մասին, որովհետեւ բեմում տեսնում էին մի հայ կնոջ, որի հետ կարող էին նույնականանալ։ Դա շատ հուզիչ փորձառություն էր թե՛ նրանց, թե՛ ինձ համար։

**-Լա՛րա, բացի անգլերեն եւ ֆրանսերեն գրելուց, կարո՞ղ ես պիեսներ գրել նաեւ հայերեն։ Հրաշալի կլիներ, քանի որ արեւմտահայերեն պիեսներ գրող հեղինակները քիչ են։**

-Դա հիանալի մարտահրավեր է, եւ ես ունեմ որոշ գաղափարներ, որոնք եռում են այս պահին։ «Սիրանույշ»-ում կան հայերեն երկար հատվածներ, բայց դրանք հիմնականում կազմված են հայտնի պիեսներից։ Կցանկանայի պիես գրել այն հայերենով, որը հաճախ խոսում են Թորոնթոյում, որը միախառնված է իմ մանկության հայերենին (որն արդեն խառնված էր արաբերենի, թուրքերենի եւ ֆրանսերենի հետ) եւ անգլերենին։ Հայեցակարգը, թե որտեղ է լեզուն ապրում մեր մեջ, եւ թե ինչպես ենք մենք տարբերվում յուրաքանչյուր լեզվով, որով խոսում ենք, մի բան է, որը տարիներ շարունակ հիացրել է ինձ։ Ես գիտեմ, որ ես այլ մարդ եմ, երբ խոսում եմ հայերեն եւ ուրիշը՝ երբ խոսում եմ այլ լեզվով։ Հայերենը նստած է իմ խորքում, այն իմ սովորած առաջին լեզուն է։

**-Շերիդան քոլեջում դու ղեկավարում ես «Մեծացնելով ոսպնյակը» թրեյնինգների եւ իրազեկման շարքը, որը նվիրված է պատմականորեն լուսանցքում հայտնված ձայներին։ Այնտեղ ներառե՞լ ես հայկական ձայներ։ Չէ՞ որ մեր ձայները նույնպես լուսանցքայնացված են։**

-«Մեծացնելով ոսպնյակը» կենտրոնացնում է պատմականորեն լուսանցքում հայտնված ձայներին բոլոր տեսանկյուններից՝ էթնիկ, ռասայական, LGBTQ+, ֆեմինիստական, նյարդաբազմազան (նեյրոդիվերգենտ)։ Շատ եմ աշխատել՝ համոզված լինելու համար, որ ներկայացված են բոլոր խմբերը։ Ես իսկապես հավատում եմ, որ երբ բարձրացնում ենք այլոց, մենք նույնպես բարձրանում ենք, ուստի, թեեւ սա կոնկրետ հայկական նախաձեռնություն չէ, այն բացարձակապես օգուտ է տվել մեր համայնքին։ Այնուամենայնիվ, կա մի բոնուս. քանի որ ես եմ այդ դասախոսությունների շարքի ղեկավարը, խոսում եմ իմ սեփական փորձի մասին, եւ ուսանողները տեղեկանում են նաեւ մեր պատմությանը։

**-Լա՛րա, մենք ծանոթացանք 2008 թվականին, երբ դու եկել էիր մասնակցելու «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին։ Հայաստան այցդ քո արմատների «փարվելու» գործողությո՞ւն էր, թե՞...**

-Միանշանակորեն՝ դա իմ արմատները բացահայտող ճամփորդություն էր, նույնիսկ եթե իմ ընտանիքը ներկա Հայաստանի տարածքից չէ։ Դա մի աներեւակայելիորեն փոխակերպող ուղեւորություն էր, որի ալիքները շարունակում են ազդել ինձ վրա։ Մի վայրից, որտեղ հայերենը հիմնականում անհայտ է, անցա մի վայր, որտեղ այն ամենուր էր։ Սյուրռեալիստական էր։ Այս մասին ես խոսում եմ «Սիրանույշ»-ում, թե ինչպես առաջին երկու օրերին զգում էի ինձ համար ստեղծված տարօրինակ երկրի դիսնեյլենդային մի տարբերակում։ Այնքա՜ն անսովոր էր՝ լինել մի վայրում, որտեղ ստիպված չէի շատ ջանքեր թափել իմ էթնիկ պատկանելությունը «լինելու» համար. ես պարզապես այն էի, ինչ որ եմ։ Եվ ես բոլորի նման էի։ Եվ, իհարկե, Հայաստանն այն վայրն էր, որտեղ ես բացահայտեցի Սիրանույշին եւ նրա պատմությունը։ Կարող է սովորական թվալ, բայց նրա համառությունն ու արտիստականությունը շարունակում են ոգեշնչել ինձ ամեն օր։

**-Ո՞ր փուլում է այժմ «Սիրանույշը»։**

-Ես ոգեւորված եմ հայտարարելու, որ «Սիրանույշն» առաջին փուլից հետո կվերադառնա բեմ հաջորդ տարվա հոկտեմբերին Թորոնթոյում կայանալիք «Նեքսթ սթեյջ» փառատոնում։ Ես նաեւ ակտիվորեն զբաղվում եմ նրա հյուրախաղերի հարցով, քանի որ բեմադրության հանդեպ հետաքրքրությունը մեծ է։ Թեեւ այն միայն հայ հանդիսատեսի համար չէ, մեր համայնքի շատ անդամներ հարցնում էին, թե երբ եմ այն ցուցադրելու Լոս Անջելեսում՝ փոքր Հայաստանում։ Եվ այն շատ եմ ուզում ներկայացնել Հայաստանում։

**-Հայաստանին եւ հայությանն առնչվող այլ ծրագրեր ունե՞ս։**

-Թեեւ այս պահին կոնկրետ հայության հետ կապված ոչինչ չեմ գրում, բայց զգում եմ, որ սփյուռքահայ արվեստագետի իմ ինքնությունը միշտ դրսեւորվում է իմ աշխատանքում. դա այն ոսպնյակն է, որի միջով ես տեսնում եմ ամեն ինչ։ Վերջերս ես գրել եւ բեմադրել եմ ֆրանսերեն մի պիես՝ միջինարեւելքցի մի ընտանիքի մասին, որն իմ «դիմահարդարման» շերտերից մեկն է՝ որպես բազմալեզու հայ արվեստագետ։ Այնքա՜ն շատ դռներ կան, որոնց միջով կարող են մուտք գործել հայ արվեստագետները՝ բացահայտելու մեր անընդհատ զարգացող ինքնության (ինքնությունների) տարբեր կողմերը...

# Իրանի դժբախտ պատահարին ՁԼՄ միջազգային արձագանքներից

Աշխարհի լրատվամիջոցները այս օրերին լի են Իրանում նախագահական ուղղաթիռի կործանման վերաբերյալ հրապարակումներով ու վերլուծություններով: Ինչպե՞ս եւ ինչո՞ւ կործանվեց ուղղաթիռն ու զոհվեցին երկրի նախագահը, արտգործնախարարն ու այնտեղ գտնվող մյուս անձինք, ի՞նչ է լինելու սրանից հետո եւ այլն: Հասկանալիորեն այս է քննարկվող հարցերի շրջանակը:



Ռուսական լրատվամիջոցներից «Լենտա.ռու»-ն, օրինակ, վկայակոչելով իրանական Կարմիր մահիկի ընկերության ղեկավարի հաղորդումը, տեղեկացնում է, որ ուղղաթիռն անկման պահին ամբողջովին այրվել է, հետեւաբար եւ բոլորը զոհվել են: Ապա, նկատի ունենալով «ում էր ձեռնտու» սկզբունքով ՁԼՄ-ներում անմիջապես դեպի ԱՄՆ-ն ու Իսրայելն ուղղված կասկածի սլաքները, բերում է մասնավորապես ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական **Ջեյք Սալիվանի** ընդամենը մի քանի օր առաջ կրկնած խոսքերը: «Վտանգը, որ Իրանը եւ նրա վստահված անձինք ներկայացնում են Իսրայելին, տարածաշրջանային կայունության ու ամերիկյան շահերի համար, ակնհայտ է»,- այն ժամանակ ասել էր նա:

Կասկածները, իհարկե, շատ ավելի ընդգրկուն են, կապված հատկապես Իսրայել-Իրան վերջին ռազմական փոխհարվածների հետ: Սակայն, ինչպես նկատում է ՌԻԱ լրատվական գործակալության թղթակիցը, Թեհրանում անգամ ակնարկ չեն անում ահաբեկչության մասին, որովհետեւ համոզված են, որ կատարվածը ողբերգական պատահականություն է: Արտաքին հետքն իհարկե՝ կա, բայց կապված է Արեւմուտքի այն պատժամիջոցների հետ, որոնց ենթարկված է Իրանի Իսլամական Հանրապետությունը փաստորեն իր գոյության բոլոր 45 տարիների ընթացքում: Պատժամիջոցները ներառում են շատ ուղղություններ, այդ թվում՝ կապված ավիատեխնիկայի եւ դրա պահեստամասերի գնումների հետ:

Քաթարական «Ալ-Ջազիրա»-ն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ վերջին տասը տարիների ընթացքում Իրանում տեղի են ունեցել ավիացիոն մի քանի պատահարներ՝ մարդատար ինքնաթիռները դուրս են սահել թռիչքուղուց, օդանավերից մեկը կործանվել է՝ բախվելով Դինար լեռանը, հայտնի են նաեւ իրանցի պաշտոնյաներ տեղափոխող ուղղաթիռների վթարի այլ դեպքեր: 2023 թվականի փետրվարին Իրանի սպորտի եւ երիտասարդության նախարար **Համիդ Սաջադիին** տեղափոխող ուղղաթիռը կործանվեց երկրի հարավում՝ Քերմանի նահանգի Բաֆթ քաղաքում: Սաջադին եւ մի քանի այլ իրանցի պաշտոնյաներ վիրավորվեցին, իսկ նրա խորհրդական **Իսմայիլ Ահմադին** զոհվեց:

«Իրան էյր» օդագնացության ընկերության օդաչու **Խուշնակ Շահբազին** «Ալ-Ջազիրա»-ի հետ զրույցում ասել է, թե Իրանը նախկինում հարյուրավոր մարդատար ինքնաթիռների գնման համաձայնություններ էր կնքել, բայց Իրանի հետ կնքված միջուկային գործարքից 2018 թվականին՝ **Դոնալդ Թրամփի** վարչակարգի օրոք ԱՄՆ-ի դուրս գալն ու Իրանի օդային փոխադրումների ոլորտի դեմ պատժամիջոցների վերականգնումն ամեն ինչ փչացրին: Ամերիկյան պատժամիջոցները նաեւ երրորդ երկրներին թույլ չեն տալիս իրենց վաճառել պահեստամասեր, որոնք անհրաժեշտ են իրանական հնացած օդանավերի նորոգման ու վերականգնման համար:

Իրանի կրոնապետական ռեժիմը իրականում գլխավորում է ոչ թե նախագահի դերը կատարողը, այլ բարձրագույն հոգեւոր առաջնորդը, նկատել է տալիս չեխական «Ֆորում 24»-ը: Եվ այն, որ ավելի ժամանակակից ուղղաթիռներ չեն հատկացվել պետության ֆորմալ ղեկավարի անվտանգության համար, խոսում է միայն իրանական իշխանության հիերարխիայում նախագահի դիրքի, այլ ոչ թե **Ռաիսիի** դեմ չարամիտ մտադրության մասին:

«Իրանական ավիապարկը ամբողջ ռեժիմի մարմնավորումն է»,- բրիտանական «Ֆայնենշըլ թայմս»-ի հոդվածում ասում է Սենք Էնդրյուսի համալսարանի Իրանագիտության ինստիտուտի հիմնադիր **Ալի Անսարին**: «Այն հին է, այս ինքնաթիռներն ու ուղղաթիռները չեն կարող թռչել, բայց կատարում են թռիչքներ մինչեւ հաջորդ վթարը»:

Լրատվամիջոցի վկայությամբ, Իրանի ռազմաօդային ուժերի համակազմի զգալի մասը նույնիսկ քաղաքացիական օդային նավատորմից հին է:

Բայց խնդիրն, ըստ ամենայնի, երկրի օդանավերի միայն հնությունը չէ եւ ստացվում է՝ նույնիսկ այնքան էլ հնությունը չէ: Նույն հոդվածի հեղինակի պնդմամբ՝ ամերիկյան այդ «Բելլ 212» մակնիշի ուղղաթիռները, որոնցից մեկով թռել էր նախագահ Ռաիսին, հնությամբ հանդերձ, հայտնի են իրենց հուսալիությամբ: Դրանք, օգտագործված լինելով դեռ Վիետնամյան պատերազմում, այժմ էլ իրենց օդային ծառայություններն են մատուցում աշխարհի շատ երկրներում: Այսօր դրանք օգտագործում են Ավստրիայի օդուժում, Ճապոնիայի առափնյա պահպանությունում, Թաիլանդի ոստիկանությունում եւ ԱՄՆ-ի հրշեջ ծառայությունում: Իսկ յուրաքանչյուր նման դժբախտ դեպքում, ասվում է հոդվածում, հարկավոր է ուշադրություն դարձնել շահագործման պայմաններին: «Եղանակն ու ճիշտ սպասարկումը ցուցակում առաջին տեղում են»:

Պետական գործիչների հետ տեղի ունեցող «տարօրինակ դժբախտությունների» մասին խորհրդածություն է հրապարակել խորվաթական «Գեոպոլիտիկա.նյուզ»-ը: «Մի՞թե Պուտինի ընկերը լինելն այսուհետեւ կյանքի համար վտանգավոր է»,- հենց վերնագրում կասկած է հայտնում հոդվածի հեղինակը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

## Աշակերտների եւ հատկապես ուսուցիչների «բացական»՝ քաղաքական խոշորացույցի տակ

Այս օրերին հանրապետության բոլոր դպրոցներում խոսք հետեւում են «ներկա-բացականերին»: Անգամ ամենահեռավոր գյուղի տարրական օղակի երեխաների բացակաների հարցը հասնում է մինչեւ նախարարություն: Գերատեսչության ղեկավարները՝ տնօրենից, վերջինս էլ՝ ուսուցչից պատասխան է պահանջում՝ ինչո՞վ է պայմանավորված աշակերտի բացակայությունը եւ արդո՞ք այն հարգելի է:

Առավել քան «աններելի» է ուսուցիչների բացակայությունը: «Եթե նախկինում դիմում էինք տնօրենին, եւ անձնական որեւէ հարցով մի քանի ժամ բացակայում, ապա հիմա դա բացառվում է: Պետք է դիմում-բացատրագիր գրենք, կամ եթե հիվանդանոց ենք գնում, «բժշկի թուղթ» բերենք,- ասում է «**Ազգ**»-ի՝ մանկավարժ զրուցակիցն ու ավելացնում,- Մի քանի դեպք է եղել, երբ ուսուցիչները մասնակցել են Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժմանը, ինչը հասել է մինչեւ նախարարություն: Գուցե դրանից հետո են որոշել՝ առավել ուշադիր լինել քաղաքացիական ու քաղաքական դիրքորոշում ունեցող մանկավարժների նկատմամբ»:

Մեր զրուցակիցը նշում նաեւ, որ «վերեւները», աչքները չորս արած, հետեւում են, որ աշակերտները սահմանված դասաժամերից րոպե առաջ տուն չգնան՝ մինչեւ վերջին վայրկյանը մասնակցելով ընդհուպ «Աշխատանքի ուսուցման»-ը կամ «Դասղեկական ժամ»-ին:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

## Ալիեւի դիմանկարը, «Բաքվի նախաձեռնող խմբի» լոգոն՝ Նոր Կալեդոնիայի անկախության շարժիչ

⇨1 Նոր Կալեդոնիայի Ազգային խորհուրդը Փարիզին մեղադրում է իրենց խնդիրներն անուշադրության մատնելու, տեղաբնակներին ստորադասելու մեջ: Գերմանական ARD-ն մայիսի 22-ին անդրադառնալով Նոր Կալեդոնիայի խժդժություններին՝ ակնարկում է, թե սրանով Ադրբեջանը Արեւմուտքին, մասնավորապես Ֆրանսիային ցուցադրում է իր ուժը: Ավելի շուտ դրա փորձն է անում:

Ֆրանսիայի ներքին գործերի նախարարը France 2-ին հաղորդել է, որ «իրականում Ադրբեջանը խառնվում է Նոր Կալեդոնիայի ներքին գործերին» եւ անկախության շարժման նախաձեռնողներից է: Նոր Կալեդոնիայի ակտիվիստների մեջ տեսանելի աշխույժ է «Բաքվի նախաձեռնող խմբի» լոգոն: 2023-ի հուլիսին Բաքվում հիմնադրված խումբը ղեկավարում է **Աբբաս Աբբասովը**, որ ադրբեջանական «Թրենդ» գործակալությանը տված հարցազրույցում ասել է, թե սատարում են «գաղութարարության եւ նոր գաղութարարության դեմ պայքարին»: Եւ նրանց սեւեռակետն այժմ Ֆրանսիան է՝ իր գաղութներով: Ակցիվ են սոցցանցերում, նաեւ գիտաժողովներ են կազմակերպում:

Ադրբեջանցիներին հետաքրքրո՞ւմ է Նոր Կալեդոնիայում ապրողների խնդիրը, երբ մեծ հաշվով աշխարհագրական այդ տեղանքը քարտեզի վրա դժվար գտնեն: Ուրեմն ինչո՞ւ է Բաքուն թիրախավորել Ֆրանսիան: Պատճառը Ֆրանսիայի՝ Հայաստանին երկարաժամկետ ռազմական սատարման ընդլայնումն է, կարծիք է հայտնում ARD-ի վերլուծաբան **Ջիլվիա Շթյոբերը**:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

## Իմաստաբանական բառարան

### *Ուռայի մոգականությունը*

Այս անգամ հաղթանակը երաշխավորող հայկական «ուռան» մեզ չփրկեց: Պատերազմի ժամանակ երկմտանքով արտասանած մեր «ուռայի» ցածր տեմբրը չկարողացավ խլացնել թշնամու ականջը: Դա էր պատճառը, որ կորցրեցինք հնգամյա բնական թվերով արտահայտված հայկական պետականության «հակադրվող» Հայրենիքի մի մասը: Հիմա էլ մեր սրտերի մեջ կորուսյալ մեծ Հայրենիքը սահմանագծելու մասին ենք մտածում եւ խորհում, որ միգուցե բանակի կանոնադրության մեջ «Ուռա»-ն «Կեցցե»-ով փոխարինելու դեպքում մեզ կհաջողվի ավելի բարձր տեմբրով առոգանել մեր հոգու ճիչը:

Խորհրդային բանակից «ուռան» փոխառված լինելու փաստը, համաձայն եմ, անհերքելի է, բայց այդ կոչականի ռուսերեն ծագումը խիստ կասկածելի եմ համարում: Չգիտեմ էլ, ոգեշնչող այդ բացականչությունը որտեղի՞ց է գալիս: Բայց հաստատ գիտեմ, Ռուսիայից չի գալիս:

«Ուռա» բառի ծագումնաբանության ու իմաստային փոփոխությունների մասին որոշ աղբյուրներից գիտենք, որ այն առաջացել է սանսկրիտերեն «haur» բառից, որն «արեգակ» իմաստն է արտահայտում: Հայտնի է նաեւ, որ հայերեն «ՀՈՒՐ» բառը դրա ժառանգներից է: Այն նաեւ օշարակի տեսակ է, որն ըստ զրադաշտականների սուրբ գրքի, մատուցվել է միայն առաքինի մարդկանց:

Ըստ «**Դեհխոդա**» հանրագիտարանային բառարանի, «հուռան» ավեստերեն ծագում ունի, եւ հնում իրանցիները հաղթանակների ու տոնակատարությունների ժամանակ այդ հիացական բացականչությունով արտահայտել են իրենց ցնծությունն ու հրճվանքը:

Նույն արմատից առաջացած «հուռան», համաձայն վկայակոչված աղբյուրի, ֆրդերեն նշանակում է «աղմուկ-աղաղակ», իսկ ավեստերեն՝ «ոգելից ըմպելիք»:

**«Ուռայի» եւ արեւմտյան բարքերի մասին է աղաղակում դանիացի գեղանկարիչ Պեդեր Սեւերին Կրոյերի՝ 1888 թվականին վրձնած «Հիպ-հիպ հուռա» (ռուսերեն՝ *гип-гип-ура*) խորագրով կտավը, որտեղ պատկերված է դանիական Սկագեն քաղաքում գինարբուքի ժամանակ «ուռա» բացականչող մի խումբ դանիացի նկարիչների հավաքույթը:**

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ



# Փաշինյանը Մոսկվայում: Խորքայի՞ն, թե՞ մակերեսային տարաձայնություններ

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** այցը Մոսկվա որոշ հետաքրքրական երանգներ էր պարունակում իր մեջ: Փաշինյանը չմասնակցեց մայիսի 7-ին կայացած **Վլադիմիր Պուտինի** երդմնառության հանդիսավոր արարողությանը՝ մատնանշելով հրավերի բացակայությունը: Բայց հաջորդ օրը, մայիսի 8-ին, նա մասնակցեց ԵԱՏՄ առաջնորդների հավաքին եւ մայիսի 9-ի վաղ առավոտյան վերադարձավ Երեւան՝ առանց մասնակցելու Կարմիր հրապարակում ծրագրված 1941-45 թթ. Հայրենական Մեծ պատերազմի (Երկրորդ համաշխարհային) շքերթին, որին ներկա էին այլ պետությունների նախագահները կամ ղեկավարները:

Մոսկվայում գտնվելու ժամանակ Փաշինյանը նախագահեց ԵԱՏՄ ընդհանուր հավաքին մաս կազմող այդ կազմակերպության Գերագույն մարմնի նիստը, որից անմիջապես հետո, նա առանձնազրույց ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հաշվի առնելով Երեւանի եւ Մոսկվայի միջեւ վերջին շրջանի հարաբերությունների լարվածությունը, կարելի է ասել, որ այդ հանդիպումը ամենակրիտիկականն էր:

Համաձայն ՀՀ կառավարության պաշտոնական կայքի հաղորդագրության, երկու կողմերը քննարկել են երկկողմ հարաբերությունների եւ տարածաշրջանային անցուդարձերի կարեւորագույն խնդիրները:

Ռուսաստանի նախագահի պաշտոնական հաղորդագրությունը քիչ թե շատ նման էր հայկականին: Սակայն դրանք միայն պաշտոնական կողմն էին ներկայացնում, իսկ հարաբերությունների բարդությունը մղում էր մարդկանց, հատկապես հայերին, իմանալ մանրամասնություններ այդ հանդիպման մասին:

Ըստ փաշինյանամետ լրատվության, վարչապետը Մոսկվայում պնդել է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Տավուշում, Սյունիքում, Վայոց Ձորում եւ հայկական այլ շրջաններում տեղակայված ռուսական բոլոր զորքերը դուրս բերվեն այդ վայրերից: Նա նաեւ պնդել է, որ ռուսական անձնակազմը հեռանա Զվարթնոցի միջազգային օդանավակայանի տարածքից:

Որոշ ժամանակ անց, Ռուսաստանի նախագահի Պուտինի մամլո խոսնակը անդրադառնալով հանդիպմանը նշել է, որ «հակառակ պայմանների փոփոխությանը, Փաշինյանն ու Պուտինը համաձայնել են վերոնշյալ հարցերի շուրջ»: **Պեսկովը** նաեւ ավելացրել է, որ հայկական կողմի խնդրանքով ռուսական սահմանային զորքերը կշարունակեն մնալ ռուս-իրանական եւ ռուս-թուրքական սահմաններում իրենց զբաղեցրած դիրքերում:

Պետք է հստակ նշել, որ հակառակ բանավոր լարված արտահայտություններին եւ տարաձայնություններին, Հայաստանը ցարդ որեւէ քայլ չի կատարել Ռուսաստան կամ ռուսական շահերի դեմ: Հակառակ Ռուսաստանի ղեկավարությամբ ստեղծված ՀԱՊԿ-ից հրաժարվելու նախնական քննարկումներին, Հայաստանը ցարդ պաշտոնապես չի հայտարարել դուրս գալու մասին, ինչը պահանջում է կատարել 6-ամսյա նախազգուշացումից հետո:

Երեւանը ակնարկել է անդամակցության ժամանակավոր սառեցման մասին, սակայն ՀԱՊԿ-ի կանոնադրության մեջ սառեցման մասին խոսք չկա: Նման գործընթաց չի նախատեսվում: Հայաստանը նաեւ հայտարարել է, որ չի վճարելու ՀԱՊԿ-ի անդամակցության սակագինը, որը վարչական փոքր գումար է ֆինանսավորելու ՀԱՊԿ-ի անձնակազմին:

Ինչ վերաբերում է հարաբերությունների տնտեսական ոլորտին, աճն ակնհայտ է: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսական գլխավոր գործընկերը: Հայ-ռուսական եւ հայ-ԵԱՏՄ առեւտրաշրջանառությունը եւ համագործակցությունը վերջերս ավելի մեծ թափ է ստացել, ինչպես գոհունակությամբ նշել են երկու կողմերի առաջնորդները:

Ակնհայտ է, որ Հայաստանը ԵԱՏՄ-ից դուրս գալու ոչ մի մտադրություն չունի, չնայած այդ մասին քննարկումները շարունակվում են հայաստանյան մամուլի էջերում: ԵԱՏՄ-ի դեպքում Հայաստանից պահանջվում է նախազգուշացնել մեկ տարի առաջ, ինչը մինչ օրս Հայաստանը չի կատարել:

Հակառակ նկատելի արտաքին լարվածության, Հայաստանը իրականում կարծես պատրաստ չէ, կամ ի վիճակի չէ դուրս գալու Ռուսաստանի անմիջական ազդեցության գոտուց:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# «Վերջին զանգ»՝ ըստ Ազգային ժողովի



Հիմնական, միջին ու ավագ դպրոցներում, ինչպես նաեւ քոլեջներում վերջինզանգյան տրամադրություններ են: Աշակերտները շնորհակալություն ու գովեստի խոսքեր են ասում սիրելի (եւ ոչ այդքան) մանկավարժներին, հիշում չարաճճիությունները, երգում, պարում, փոքր-ինչ հուզվում եւ այսպես շարունակ: Տարիների հետ փոխվում է միջոցառման միայն ձեւը. ուսուցչին (երբեմն անհարկի եւ ուռճացված) մեծարելու ցերեկույթի բովանդակությունը նույնն է արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի...

Սիրելի ուսուցչին, տվյալ պարագայում՝ կուսառաջնորդին գովաբանելու մոտ մեկուկես ժամանոց արար նաեւ խորհրդարանում էր կազմակերպվել: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, որ, երեւում էր, իրենց վերջին զանգին փայլել են ուսուցչին մեծարելու բնատուր շնորհով, մեկը մյուսին հերթ չտալով, գովում ու գովում էին **Նիկոլ Փաշինյանին**:

Ազգային ժողովի «Վերջին զանգի» ցերեկույթը Կառավարություն-Ազգային ժողով հարցուպատասխանին էր: Թե՛ հարցեր տվողն էին իրենք, թե՛ պատասխանողը: Պարզապես ոչ թե հարցեր էին, այլ դիֆերամբներ՝ «դասղեկ Փաշինյանին»: «Պատմական ելույթ», «պատմական հարցազրույց», «Հայաստանի համար պատմական ժամանակներ» եւ նմանատիպ այլ «պատմական» բնորոշումները հենց նրանը՝ մեր երկրի եւ մեր օրերի «պատմական» ղեկավարինն էին, որ, իջնելով Օլիմպոսի գագաթից, այս անգամ իրեն ոչ թե աստվածների, այլ պատմական ֆիգուրի՝ Պապ թագավորի հետ էր համեմատում: Ըստ նրա՝ 374 թ-ից՝ Պապի մահվանից հետո, Հայաստանը սխալ ճանապարհով է գնում, ու հիմա իր գլխավոր առաքելություն է համարում կասեցնել «պատմական Հայաստանի» դարերի ընթացքն ու «իրական Հայաստանը» «պապական» հունին վերադարձնել:

***Հ.Գ.-** Ի գիտություն «շրջանավարտ» ՔՊ-ականների՝ նման իրավիճակներում խորհրդային դպրոցների հոկտեմբերիկներն ու պիոներները խրոխտ ձայնով եւ հպարտ կեցվածքով կարդում էին ժողովուրդների հոր ներբողը:*

*«Այսքան ուրախ կյանքը մեզ*
*Լենին պապիկն է տվել...»*

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Գիտագործնական ուսանողական գիտաժողով



Վերջերս Ռուսաստանի Գ. Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտության համալսարանի Երեւանյան մասնաճյուղում տեղի ունեցավ «Տնտեսության թվայնացում. նախադրյալներ, միտումներ, հեռանկարներ» գիտագործնական ուսանողական կոնֆերանսը, որին մասնակցում էին բակալավրիատի եւ քոլեջի ուսանողները:

Երեւանի մասնաճյուղի տնօրեն **Թ. Վարդանյանը** ընդգծեց համաժողովի նպատակը՝ թվային տրանսֆորմացիայի ոլորտում ուսանողների ներգրավման կարեւորությունը ժամանակակից տնտեսության զարգացման համար եւ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման անհրաժեշտությունը, որոնք ունակ են արդյունավետ աշխատելու թվայնացման պայմաններում:

Համաժողովի ընթացքում ուսանողները ներկայացրեցին զեկույցներ նորարար կառավարման, կառավարման եւ կադրերի զարգացման ժամանակակից մեթոդների, թվային տնտեսության եւ արհեստական ինտելեկտի վերաբերյալ:

Համաժողովի բոլոր մասնակիցներին կտրվեն էլեկտրոնային վկայականներ: Ուրախալի է, որ ուսանողները ակտիվ մասնակցություն են ունենում գիտագործնական գիտաժողովին եւ բարձրացնում իրենց գիտելիքներն այս բնագավառում:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

# Օղի թորելու տատիս բանաձեւն ու մեր փրկությունը

«Առաջնորդ չկա», «մարդիկ թմբիրի մեջ են», «երկիր ենք կորցնում». արտահայտությունները մեր խոսույթում գերակշռում են 2020-ի պատերազմից հետո: Ի՞նչն է պատճառը, որ մկրատվող հայրենիքի ցավն անգամ մեզ չի միաբանում: Պատճառն, ըստ իս, սիրո պակասն ու համընդհանուր ատելությունն է:

«Սիրո եւ հանդուրժողականության հեղափոխության» միֆը կոտրվեց 2018-ի քաղաքական վերադասավորումներից կարճ ժամանակ անց: Միմյանց չհանդուրժելու անդառնալի մոլուցքը պատուհասում է մեզ ամեն օր ու ժամ՝ գնալով ավելի ահագնորեն: Սեւուսպիտակի բաժանարար ալիքը մտել է ամուսինների մատի եւ մատանու արանքը, ծնողին զավակի դեմ հանել:

Բարոյականության կարմիր գիծ վաղուց չի մնացել: Մանիպուլյացիաներն ու էմոցիաները ստվերել են բանականությունը, տարբերվող տեսակետ ունեցողին ամենավերջին բառերով վիրավորելը՝ դարձել աքսիոմ:

Ինչպե՞ս կամ ո՞վ կարող է թոթափել ուրվական- ատելության ալիքը: Հաստատ ո՛չ այն հասարակությունը, որ ողջ-առողջ մարդու համար փողոցում սեւ ժապավեն է կախում կամ տան առջեւ ծաղկեպսակ, դագաղ դնում: Ատելությանը սիրով հաղթելու բանաձեւ գուցե ունի միայն բնությունը:

«Գետը պարզվում է մինչեւ վերջ պղտորվելուց հետո». ժողովրդական խոսքն ինձ տատիս կենսափորձն է հիշեցնում: Երբ ուզում էր հասկանալ՝ օղու լափը հասունացե՞լ է ու կարո՞ղ է թորել, կողմնորոշվում էր թթված լինելու աստիճանով: «Լա՜վ թթվել է, պատրաստ է»,- ասում էր: Եթե ուշացներ մեկ-երկու օր, «լափը կկտրեր», օղի դուրս չէր գա:

Տատիս իմաստնությունն այսօր հուշում է, որ հասարակության զուլալվելու պահը հասունացել է՝ դեռ վաղուց: Կա՛մ թեժ կրակից մաքուր սպիրտ դուրս կգա, որ կախտահանի բարոյալքված ամեն ինչ ու ամենքին, կա՛մ էլ՝ օղու՝ ժամկետանց շաղախի պես մենք էլ կկտրվենք՝ այս կանաչ, մեծ աշխարհից:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Խաչվող ճանապարհներ…

*«Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով»:*

**Եղիշե Չարենց**

Չեմ հիշում այսպիսի մայիս, ինչ որ շատ է ցուրտ, նայում ես դուրս, շուրջը կանաչ է բոլոր, նայում ես եղանակին, օդի սառնությունից մրսում ես:

Սիրտդ սառչում է, չգիտես անզորությունից, ցավից, տարակուսանքից, թե՞ զարմանքից, ափսոսանքից: Չնայած շատ բաներ տեսնելուն՝ արհավիրք ու պատերազմ, բազում բազում կորուստներ, բայց սա մի ուրիշ, անհասկանալի, անծանոթ զգացում է:

Վահագնը՝ հրապարակային մեր պայքարի ակտիվ մասնակիցներից, անկոտրում կամքի տեր, խելացի, խարիզմատիկ անձնավորություն, Կիրանց գյուղի լանդշաֆտային չքնաղ մի լուսանկար էր հրապարակել կից գրությամբ. «Էսպիսի կանաչ ոչ մի տեղ չեմ տեսել»: Ամենաքիչը նկարիչ պիտի լինես, որ զգաս կանաչի այդ կենարար, երանավետ շունչը, շատ հագեցած ու շատ հարուստ, աստիճանաբար մուգից բաց երանգափոխվող, հաջորդաբար կրկնվող: Տեսնես ինչի՞ց է, որ այդքան սիրուն ու քաղցր է, հողի հինավուրց էներգիա՞ն է զուգել սքանչելի կանաչով դաշտավայրը, թե՞ կորցնելու ափսոսանքն է մեջներս խոսում: Ինչ հեշտ ենք հաշտվում կորստի մտքի հետ, չէ՞:

Փորձենք անձնավորել հողի կորստի գաղափարը, կտեսնենք որ մեկ մետր հողի, մի կտոր սեփական գույքի համար իրար կոչնչացնեն մարդիկ, բայց երկրի՝ շերտ շերտ, մաս մաս կորուստը նմանների համար ոչինչ է, մինչեւ դա հասնի սեփական դռանը: Թեեւ նմանների համար միջոցների խտրություն չկա…

Մեկ ամիս առաջ էր երեւի, անցնում էի Մաշտոցի պողոտայի վերին հատվածներով, Վիլյամ Սարոյանի արձանի մոտ ոտքերս ինքնաբերաբար կանգ առան, աչքերիս առաջ պահի մեջ քաղաքը փոխվեց, միտքս կտրվեց իրականությունից, մշուշվեց, ոնց չարագուշակ տեսիլք՝ Սարոյանի արձանի փոխարեն աչքիս հանկարծ երեւաց թուրք գրողի արձան, շուրջն անծանոթ լեզվի հնչյուններով լցվեց, տառեր, բառեր թափառող՝ ինձ անհասկանալի, խորթ: Քարացա արձանից ավելի, ամեն ինչ կանգ առավ մի պահ, հետո ուշքի եկա, մտքերս կարգի բերեցի:

Մաս մաս կորցնելով՝ չենք նկատելու ոնց կհայտնվենք ամբողջի կորստի դեմ հանդիման, ու կկորցնենք ինքնություն, իրավունք ու արժանապատվություն, կդառնանք ոչինչ, ոչնչություն:



Կիրանցի կնոջ արցունքն ու ձայնը կխառնվի, կձուլվի այն չքնաղ կանաչին, արդար աշխատանքով սարքած հասարակ, բայց իր համար աշխարհի ամենաթանկ տունը կմնա իր արյան հիշողություններում: Որովհետեւ այդ պարզ տունն ու հողակտորը նրա համար կադաստրի վկայականով սեփականություն չի սոսկ, Հայրենի՛ք է, իսկ Հայրենիքը վաճառքի չի հանվում, գին չունի:

Ոնց Արցախի տները մնացին անտերացած, մնացին որպես հիշողություն:

- Հետ ենք բերելու»,- ասում ենք ու կասենք երկար, ինչպես Արեւմտյան Հայաստանի համար ենք ասում, ու շատ երկար կճոճվեն մեր երազներն օդում: Որովհետեւ հիմա հայ մարդուն, հայ այդ կնոջը կիրանցի, որ կորցնում է իր տունն ու իր հողը, իր տանից հանում է հայ ոստիկանը, հիմա հայերն են փակում մեր ճանապարհները, շրջափակում, չեն թողնում մտնեն գյուղ, գնան տուն՝ ո՛չ պատգամավորին, ո՛չ սրբազանին, ո՛չ լրագրողի, ո՛չ բնակչի, որեւէ մեկին, որը պայքարի է ելել, որը չի հանձնվում, դեմ է հողատվության միակողմանի այս գործարքին, այս՝ «ոչինչ մեզ- ամեն ինչ նրանց»-ին: Սրբազանն ասում է՝ հոգեբանական ծայրահեղ հուսահատ վիճակում են մարդիկ, ուրվականային բնակավայրի է նման, բնակիչները քաշվել, ծվարել են իրենց տներում, «առանց մեռել սուգ է մեր գյուղում»,- ասում են: Փաստորեն գյուղը կամավոր լքելու իմիտացիա են ստեղծում:

Հայ երիտասարդին փողոցում հայ ոստիկանը հետապնդում է Հայաստանի դրոշը ձեռքին ունենալու համար, հայ մարդն իր երկրում պատժվում է իր հողը, տունը պաշտպանելու համար: Լսված բա՞ն է:

Հեգնա՞նք է, պատի՞ժ, ստորացման ի՞նչ աստիճան, այսչափ նահանջ. ավելիով հնարավոր չէ նվաստանալ: Այսպես է կատարվում երկրի նվաճումը ներսից:

Հիմա պարզ է, չէ՞, թե ինչո՞ւ ենք այսքան փոքրացրել մեր հայրենիքը, սահմանները մոռացել ու մոլորվել, որովհետեւ անկարեկից, անսեր ու անտարբեր ենք, անկեղծ չենք ո՛չ ինքներս մեզ հետ, ո՛չ ուրիշների: Որովհետեւ կորցնելուց հետո ենք միայն գլխներիս տալիս. լավ ողբալ գիտենք, լացակումած ոտանավոր ու երգեր գրել գիտենք, մխիթարվելով տուրիստական այցերով՝ Վան ու Աղթամար (Արարատի մասին էլ չասած, հնար լիներ, մեր տեսադաշտից կփակեին սարը), գուցե շուտով Սեւան ու Տաթեւ էլ… Ախ ու վախով նորից կասենք՝ հետ ենք բերելու, մինչդեռ բառերն օդում կհեգնեն մեզ: Երեւի ճիշտ էր ֆիլմի հերոսը, թե թափառական հոգի ունենք. օտար ափերում փող ու երջանկություն կփնտրենք, երբեմն կկարոտենք, երբեմն ՝ նույնիսկ անկեղծ, կասենք՝ ի՞նչ երկիր ունեինք, է՜, ի՞նչ հայրենիք, իսկը դրախտավայր…

Եվ ինչո՞ւ է մեզ հետ այսպես պատահում միշտ: Նաեւ այն պատճառով, որ գնահատել չգիտենք մեր իրական արժեքավորին ու իրական արժեքները, չենք էլ ճանաչում, չենք ուզում տեսնել լավին, իրապես տաղանդավորին, չենք սիրում ու չենք փնտրում ճշմարտություն եւ ազնվություն, կարիքը չենք զգում դրա, շատ հեշտ վարժվում ենք կեղծիքին ու սիրում դա: Այսպես երեւի հեշտ է ապրելը: Բայց դա խաբուսիկ է, դրա արձագանքը, պատասխանը ուշ թե շուտ լինելու է… Ու սա, այս ընտրությունը՝ ստի ու երեսպաշտության, մեզ այսպես տանում է ներքեւ, տանում դեպի անդունդ, փոս ու ավելի, ավելի խորացնում, մինչեւ կործանում:

Բայց մի՞թե վերջապես արթնանում ենք, կանաչի զովությունի՞ց Տավուշի, թե՞ ինքնապաշտպանական բնազդն է սառցակալած մեր ուղեղներն ասեղնահարում:

Միայն թե նորից հին, նեխած լափ չգցեն մեր առաջ, արթնացումը մահ չդարձնեն: Այս մտքի անզորությունից լաց լինել ես ուզում, հետո հասկանում, որ դա նահանջ է՝ հակացուցված:

…Մայիսը, չեմ հիշում, որ այսքան սառն ու թաց եղած լիներ, տոների այս ամիսը, գարնան վերջինը: Կարծես պատմության դասագրքի էջեր թերթելիս լինեմ, մեր պատմության տասներորդ դարից այս կողմ՝ վերջին թագավորության կամ պետականության անկումից հետոյի, երբ ով ասես չեկավ ու չանցավ մեր վրայով. անտեր մնացած ու ընչազուրկ ժողովուրդ, ինչեր ապրեց մինչեւ 1918-ի հաղթական Մայիսը ու հետո էլ… որովհետեւ պատմությունը (կյանքը) սիրում է կրկնվել, եթե դասեր չեն առնում: Իսկ մենք ծույլ ենք դաս առնելու մեջ…

Միակ հաստատուն կառույցը հայ հանրային կյանքի Եկեղեցին մնաց փաստորեն, որ հոգեւոր ծառայությունը զուգակցեց հայապահպանման կարեւոր գործին, որքանով կարողացավ դարձավ հույս ու ապավեն այդ դժվարին, տեւականորեն ամենազուրկ ժամանակներում: 1915 ից հետո ձեւավորված սփյուռքահայ գաղութներում եկեղեցու շուրջ չեղա՞վ սկզբնական համախմբումը տարագիր հայության: Հիմա ոչնչացվում է ամեն ինչ, չի եղել, չկա պատմություն, չի եղել պատմական Հայաստան, իրական Հայաստանի հետ կապ չունի, քանդվում, ավերվում է ամեն ինչ: Աբսո՜ւրդ, ուղեղի մորմոք, զառանցանք:

Այսօր՝ քաղաքի Սուրբ Աննա եկեղեցին մի տեսակ ամրոցի է նմանվել: Մարդիկ կարծես պաշտպանված են զգում այս վայրում: Անհայրենիք մարդկանց համար տեղ պիտի չլինի այստեղ: Շատ հույսով ենք, ավելի շուտ ուզում ենք, որ այս Շարժումը իսկապես ազնիվ լինի, ինչպես հռչակել են՝ հայրենափրկության ու վերածննդի: Որ, ինչպես Շարժման առաջնորդն ասաց, նոր գինին հին տակառներում չլցվի… Որովհետեւ մեծ խորհուրդ կա այս ամենի մեջ՝ ճանապարհի, հավաքավայրի, Եկեղեցու, եւ այստեղ հնչած ամեն խոսք՝ դատապարտված է խիստ պատասխանատվության: Այստեղ հսկող աչքը ուրիշ է, մթնոլորտն է ուրիշ, ուրիշ զորություն ունի՝ ներքին հզոր տեսողության, կեղծիքը մարդու չպիտի անցնի այստեղ. առաջին հարվածը հենց իրեն՝ կեղծիքը կրողին է վերադառնալու:

Աղոթքի բառեր ենք լսում այստեղից, լույսը ծնվում է նախ ներսից…

Բայց լավ կլիներ ՝ ամեն երեկո նույն ժամին զանգերն էլ երկար հնչեին Եկեղեցու…:

# Արդիականացվում են Գյումրի քաղաքի բակային պոմպակայանները

Գյումրիում «Վեոլիա Ջուր» ընկերությունը սկսել է բակային պոմպակայանների արդիականացման մեծածավալ ծրագիր: Քաղաքում գործող 48 բակային պոմպակայանների կեսդարյա վաղեմության եւ հաճախ վթարվող 24 պոմպ արդեն փոխարինվել է գերմանական ժամանակակից «Վիլո» ֆիրմայի պոմպերով: Արդյունքում Գյումրիի 49 շենքի հարյուրավոր բաժանորդներ նախկին 6-8 ժամվա փոխարեն այժմ ունեն 18-19 ժամ կանոնավոր ջրամատակարարում:



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ սպասարկում է մայրաքաղաք Երեւանը, 45 այլ քաղաքներ, 334 գյուղեր: Ընդամենը՝ 380 բնակավայր: Դրանից բացի, այն մեծածախ ջրամատակարարման ծառայություններ է մատուցում 76 բնակավայրի: Ընդհանուր առմամբ ընկերությունը սպասարկում է 805 000 բաժանորդի, որից ակտիվ է 622 000 բաժանորդ:

Հարկ է նշել, որ «Վեոլիա Ջուր» ընկերությունն շուրջ 2900 աշխատակիցներով հանձն է առել ապահովել սպասարկման տարածքի խմելու ջրի արտադրության եւ վաճառքի, կեղտաջրերի մաքրման համակարգերի կառավարումը, բնակավայրերի բաշխիչ ցանցերի արդյունավետության բարձրացումն ու զարգացումը:

Շնորհիվ համակարգում պարբերաբար իրականացվող ներդրումային ծրագրերի՝ գրանցվում են նոր ձեռքբերումներ սպառողների կարիքների բավարարման, ջրամատակարարման տեւողության բարելավման համար:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 23.05.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: